

ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՀԱՅԱԴՈՒԼ ՍԿԱԾ Է ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻՆ ՎՐԱՅ

«Ժառանգութիւն» կուսակցութեան ղեկավար՝ Րաֆֆի Յովհաննիսեան Մարտ 15-էն սկսեալ հացադուլ սկսած է Երեւանի Ազատութեան հրապարակին վրայ: «Ես որեւէ պահանջ չունեմ, ես աւելի շատ ունեմ ակնկալիք: Ժողովուրդն ունի պահանջ վերահաստատել՝ իր իշխանութիւններին ընտրելու իրաւունքը», այս առթիւ ըսած է Յովհաննիսեան:

Խօսելով իր ակնկալիքներու մասին Յովհաննիսեան, մասնաւորապէս յայտնած է. «Ակնկալիքս այն է, որ գործող իշխանութիւնները գործուն քայլեր իրականացնեն Հայաստանը հետ պահելու արտահերթ այս անդունդից, եւ երկրորդ, որ ընդդիմութիւնն ու հասարակութիւնը չմնան կրակորական վիճակում եւ համագործակցութեան դաշտ ստեղծեն: Այսպէս շարունակել կը նշանակի դատապարտել երկիրը եւ նոր սերունդներին իրաւագուրկ ապագայի: Ուզում եմ նաեւ իմ համեստ օրինակով ցոյց տալ, որ մեր երկրում փոփոխութիւններ ռե քաղաքական արդիւնքներ չհարաւոր է հասնել քաղաքացիական ակտիւութեան եւ զրկանքների միջոցով: Ես իմ օրինակով ցոյց եմ տալիս, որ իշխանութիւնը նոյնպէս պէտք է իրեն զրկի որոշ բաներից, որպէսզի երկիրը փրկուի վերահաս վտանգից»:

Պատասխանելով այն հարցին, թէ որքան ժամանակ ան մտադիր



Րաֆֆի Յովհաննիսեան Ազատութեան հրապարակին վրայ հացադուլ սկսելէ ետք

է մնալ Ազատութեան հրապարակի վրայ եւ կամ արդեօք վրան պիտի դնէ՞, Յովհաննիսեան ըսած է, որ ժամկէտ չէ դրած. «Աստուած ինձ ուժ տայ, մարմինս որքան կը դիմանայ: Վրանի մասին դեռ չեմ մտածել, երեւի կը մնամ առանց վրանի, այդքան ցուրտ չի: 2005 թ. Նոյեմբերին մի քանի օր գիշերել ենք այստեղ եւ վրանի կարիք չի եղել: Բայց եթէ երկար օրեր այստեղ մնամ, չեմ բացառում, որ վրանի կարիք լինի»:

Պատասխանելով այն հարցին, Շաբ.ը էջ 4

ՇԱՐԼ ԱԶՆԱԲՈՒՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՖՐԱՆՍԱՀԱՅԵՐԸ ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԾ ԵՆ ԾԵՐԱԿՈՅՏԻ ՇԵՆՔԻՆ ԱՌՁԵԻ

Մարտ 12-ին, Փարիզի մէջ Ֆրանսահայերը ցոյց կազմակերպած են Մերակոյտի շէնքին մօտ, պահանջելով, որ Մերակոյտը իր օրակարգին վրայ ընդգրկէ Հայոց Յեղասպանութիւնը մերժելու համար քրէական պատասխանատուութիւն սահմանող օրինագիծը:

Ցոյցին մասնակցած են աշխարհահռչակ երգիչ եւ դերասան ու ներկայիս Չուրիցերիոյ մօտ Հայաստանի դեսպան՝ Շառլ Ազնաւուր եւ Ֆրանսահայ քաղաքական գործիչ Պատրիկ Դեւիճեան:

2006-ի Հոկտեմբեր 12-ին, Ֆրանսիայի Ազգային ժողովը օրինագիծ ընդունեց, որով 1915 թուականի Հայոց Յեղասպանութեան ժխտումը կը հանդիսանար քրէորէն պատժելի յանցագործութիւն: Օրինագիծը կը սահմանէր, որ հայերու գանգուածային սպանդի ժխտումը կը պատժուի մէկ տարուայ բանտարկութեամբ եւ 45 հազար Եւրօ տուգանքով:

Այդուհանդերձ, օրինագիծը ուժի մէջ մտնելու համար պէտք է արժանանայ Մերակոյտի վաւերացման, որ կ'ուշանայ քաղաքական նկատարումներով:

Անցեալ տարեվերջին, հիմնուելով «Ուրբիլիքս» կազմի կողմէ գաղտնագրեծուած դիւանագիտական փաստաթուղթերուն վրայ, Ֆրանսական «Լը Մոնտ» հեղինակաւոր օրաթերթը տեղեկութիւններ հրատարակեց այն մասին, որ Ֆրանսայի նախագահ Նիկոլա Մարկոզի, որ Ֆրանսահայ համայնքին շուրջ խոստումներ տուած էր 2007-ի ընտրապայքարի ժամանակ՝ այդ օրինագիծի վաւերացման նեցուկ ըլլալու վերաբերեալ, նախագահ ընտրուելէն մէկ ամիս ետք, Անգարա այցելած իր խորհրդականի միջոցով երաշխաւորած է թուրքիոյ իշխանութիւններուն, որ ինք պիտի ընէ ամէն ինչ, Մերակոյտին կողմէ օրինագիծի վաւերացումը խափանելու համար:

Այս բացայայտումը բուն հակազդեցութիւններ յառաջացուցած էր շուրջ 500 հազար հաշուող Ֆրանսահայ համայնքին մօտ, որու ձայնը կրնայ վճռորոշ նշանակութիւն ունենալ 2012-ին Ֆրանսիայի մէջ տեղի ունենալիք նախագահական ընտրութիւններուն ժամանակ:

ՀԱՐԻՐ ՀԱԶԱՐԱԲՈՐՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԵՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՑՈՅՑԻ ԸՆԹԱՑՔԻՆ ԵԼՈՅԹ ՈՒՆԵՑԱՒ ՆԱԵՒ ՀՆՉԱԿԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ



Նկարներ Պէյրութի մէջ տեղի ունեցած հսկայ ցոյցէն: Հագարաւուր Ժողովուրդ եւ Ընկ. Սեպուհ Գալիֆեան ելոյթի պահուն

Պէյրութի Ազատութեան հրապարակին վրայ, 14 Մարտի ուժերը անգամ մը եւս վերահաստատեցին իրենց զօրակցութիւնը՝ Մայրիներու Յեղափոխութեան սկզբունքներուն: Միջազգային լրատու գործակալութիւններու գնահատմամբ՝ 800 հազար ցուցարարներ պահանջեցին վերացնել ապօրինի զէնքը, որ կը գտնուի Իրանի հովանաւորութիւնը վայելող Շիի Մահմետական «Հըզպալլա» կուսակցութեան ձեռքը՝ Իսրայէլի դէմ պայքարելու պատրուակով:

Լիբանանի բոլոր շրջաններէն քաղաքական ուժեր իրենց մասնակցութիւնը բերին Կիրակի, 13 Մարտին տեղի ունեցած հանրահաւաքին:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինը իր բոլոր միաւորներով մասնակցեցաւ

այն հաւաքին: Արդարեւ, Կիրակի առաւօտեան Հնչակեան կուսակցութեան հովանաւորութիւնը վայելող միաւորներու պատասխանատուներ, շարքայիներ եւ համակիրներ համատեղուեցան Պէյրութի Հ.Մ.Մ. ակումբին առջեւ եւ ժամը 10:00-ին, լիբանանեան եւ կուսակցական դրօշներով ուղղուեցան դէպի Ազատութեան հրապարակ: Հնչակեան Կուսակցութեան հետեւորդները կը գլխաւորէին Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմնոյ ատենապետ ընկ. տղթ. Մարտիկ Ժամկոչեան, եւ պետական երեսփոխան մեթր Սերժ Թուրսարգիսեան:

Հաւաքին ելոյթ ունեցան նախկին վարչապետ եւ «Մուսթաֆայալ» շարժումի ղեկավար Սատ Հարիրի, Փաղանգաւոր կու-

Շաբ.ը էջ 4

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԼԻՑԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ ԱՆԳԱՐԱ ՈՒԱՇԻՆԿԹՆ ԿՈՒՂԱՐԿԵ ԻՐ ԳԼԽԱՒՈՐ ԲԱՆԱԳԱՑՈՒ

Թուրքիոյ պետական նախարար, Եւրոպայի Միութեան անդամակցութեան հարցով գլխաւոր բանաձեւիչ՝ Էլեմէն Պաղըզ մեկնած է Միացեալ Նահանգներ: Այս մասին կը հաղորդէ թրքական մամուլը, յայտնելով, որ Պաղըզի ուաշինկթընեան հանդիպումներու հիմնական նիւթը պիտի ըլլայ Հայոց Յեղասպանութեան հարցը:

Ըստ թրքական «Ենի Շաֆաք» պարբերականին, Անգարան սկսած է որոշ քայլեր ձեռնարկել՝ Մերակոյտի օրակարգին մէջ Հայոց Յեղասպանութեան վերաբերեալ նոր բանաձեւի հնարաւոր ընդգրկումը ձախողեցնելու համար: Այդ իսկ նպատակով, Ուաշինկթըն կը գործուղուի Էլեմէն Պաղըզ: Վերջինս

Միացեալ Նահանգներ պիտի մնայ մինչեւ Մարտ 19:

Միեւնոյն ժամանակ, պարբերականը վկայակոչելով անանուն դիւանագիտական աղբիւրներ կը գրէ թէ, քիչ հաւանական է, որ այս տարի Հայոց Յեղասպանութեան վերաբերեալ բանաձեւը յայտնուի Մերակոյտի օրակարգին մէջ, քանի որ Ներկայացուցիչներու պալատի նախկին խօսնակ Նէնսի Փելոսիին փոխարինուած է հանրապետական ձոն Պոհնեթով:

Միւս կողմէ, թրքական կառավարութիւնը որոշած է մէկ միլիոն տոլար յատկացնել՝ Հայոց Յեղասպանութեան բանաձեւը ձախողութեան մատնելու նպատակով:

ԻՆՉՆ Է ԱՆՎԱՆՈՒԹԵԱՆ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

ՅԱԿՈԲԱԴԱԼԵԱՆ

Դժուար է չիշել, թէ Սերժ Սարգսեանը վերջին անգամ երբ էր խօսել ներքաղաքական թեմաների վերաբերեալ: Մարտի 12-ին նա իր ներքաղաքական «լուծութիւնը» խախտեց Մաղկաձորում: Սակայն դրանից մէկ օր առաջ էլ նա նախագահի նստավայրում խորհրդակցութիւն էր հրաւիրել տնտեսական խնդիրների վերաբերեալ, ինչը նոյնպէս ունէր ակնյայտ ներքաղաքական ենթատեքստ, քանի որ Սերժ Սարգսեանը խօսում էր վերջին շրջանում ներքաղաքական կրակի վրայ իւրի ազդեցութիւն ունեցող սոցիալական խնդիրների մասին:

Ինչը ստիպեց Սերժ Սարգսեանին անդրադառնալ ներքին քաղաքականութեանը: Նախընտրական տրամաբանութիւնը, երբ պէտք է արդէն անցնել կոնկրետ քարոզչական գործողութիւնների, մէկ տարի անց որոշակի էֆեկտ ակնկալելու համար, թէ՛ կոնկրետ ընդդիմութեան Մարտի 17-ի հանրահաւաքի սպասումը, յատկապէս Մարտի 1-ի բազմամարդ հանրահաւաքի ֆոնին: Ի վերջոյ, ներքաղաքական խնդիրների վերաբերեալ Սերժ Սարգսեանի «երկօրեայ» անդրադարձը ինչ որ կերպ կարելի է համարել նաեւ անդրադարձ ընդդիմութեան այն 15 կէտերին,

մասնեց: Օրինակ, արդեօք ընդդիմութեան Մարտի 17-ի հանրահաւաքից առաջ ոստիկանութիւնը չի գնալու Կոնգրէսի ակտիւիստների դէմ տարբեր սաղարանների եւ ահաբեկման քայլերի, արդեօք հանրահաւաքից առաջ չեն փակուելու ճանապարհները: Թէ Սերժ Սարգսեանը փոփոխութիւն խոստացաւ ոչ թէ մինչեւ Մարտի 17-ը, այլ դրանից յետոյ, ու դրա համար էլ ոստիկանութիւնն իրեն բնորոշ մեթոդներով ձերբակալել է Կոնգրէսի համակիր Սամսոն Խաչատրեանին:

Փոխուելու է արդեօք ոստիկանապետը, որ ընդամէնը մի քանի օր առաջ սպառնում էր պատգամաւորներին եւ ցուցարար կանանց, որ գործ չունենան ոստիկանութեան հետ: Կամ, փոխուելու է արդեօք գլխաւոր դատախազութիւնում ունէլ պաշտօնեայ, որն ասենք առ այսօր «չի կարողանում» բացայայտել, թէ Մարտի 1-ին ովքեր են եղել կոնկրետ կրակողներն ու կոնկրետ կրակելու հրաման տուողները: Կամ, փոխուելու է արդեօք Պետական եկամտների կոմիտէի նախագահը, ով համարում է Հայաստանի խոշոր գործարարներից, սեփականատէրերից մէկը:

Ի՞նչ բնոյթ են կրելու Սերժ Սարգսեանի խոստացած փոփոխութիւնները: Չէ՞ որ մինչ այժմ

Ինչը ստիպեց Սերժ Սարգսեանին անդրադառնալ ներքին քաղաքականութեանը: Նախընտրական տրամաբանութիւնը, երբ պէտք է արդէն անցնել կոնկրետ քարոզչական գործողութիւնների, մէկ տարի անց որոշակի էֆեկտ ակնկալելու համար, թէ՛ կոնկրետ ընդդիմութեան Մարտի 17-ի հանրահաւաքի սպասումը, յատկապէս Մարտի 1-ի բազմամարդ հանրահաւաքի ֆոնին

որ որպէս պահանջ կամ առաջարկ ներկայացուցին իշխանութեանը Մարտի 1-ի հանրահաւաքում: Միգուցէ Սերժ Սարգսեանը փորձեց որոշակի յայտարարութիւններով թուլացնել ընդդիմադիր զանգուածների սպասումների այն ֆոնը, որ առկայ է հանրապետութիւնում:

Իհարկէ, Սերժ Սարգսեանն ուղղակիօրէն չանդրադարձաւ եւ չխօսեց դրանց մասին, բայց երբ փորձում ենք դիտարկել, թէ երկու օրերի ընթացքում նա ինչ թեմաների անդրադարձաւ թէ նախագահի նստավայրում տեղի ունեցած խորհրդակցութեան, թէ Մաղկաձորում լրագրողների հետ ձեպագրոցի ընթացքում, ապա տեսնում ենք, որ այդ թեմաները կարծես թէ հենց այն էին, ինչ շօշափուում են ընդդիմութեան 15 կէտերի մէջ, իհարկէ որոշ բացառութիւններով, որովհետեւ քաղաքատարկեալների կամ Մարտի 1-ի խնդիրն օրինակ որեւէ կերպ անդրադարձ չեղաւ:

Փոխարէնը Սերժ Սարգսեանը կարծես թէ ակնարկեց, որ վարչապետի հրաժարական առաջիկա չի լինի, գոնէ մինչեւ Մայիս-Յունիս: Փոխարէնը փոփոխութիւններ խոստացաւ ոստիկանութիւնում, դատախարակական համակարգում եւ հարկային ու մաքսային գերատեսչութիւնում: Բայց ինչպիսին են լինելու այդ փոփոխութիւնները, նա չմանրա-

էլ նա կարծես թէ այլ կառուցներում էլ փոփոխութիւններ կատարեց, քաղաքապետ, արդարադատութեան նախարար, սոցներդրումների հիմնադրամի նախագահ, տնտեսական բլոկի նախարարներ փոխեց, սակայն այդ փոփոխութիւնները կարծես թէ որեւէ էական ու առարկայական անդրադարձ չեն ունեցել կեանքի որակի փոփոխութեան համար: Իհարկէ, անցած ժամանակը գուցէ դեռ քիչ է, բայց քիչ է մնացել նաեւ հասարակութեան համբերութեանը: Ու Սերժ Սարգսեանը դա թերեւս լաւ է գիտակցում, այլապէս հազիւ թէ լայնածաւալ եւ վերջին ամիսների համար աննախադէպ անդրադարձ կատարեր ներքաղաքական անցուղարձին:

Չէ՞ որ Սերժ Սարգսեանն ինքն էր վարչապետին խնդրում, որ յանձնարարութիւնները ձախողելու համար արդարացումներ չընդունուեն: «Մեզ արդարացումներ պէտք չեն», ասում էր Սերժ Սարգսեանը Մարտի 11-ի խորհրդակցութեանը: Մինչդեռ «ժամանակ է պէտք» արտայայտութիւնը հենց արդարացում է, եւ եթէ կադրային փոփոխութիւնների, կամ որակական փոփոխութիւնների համար իշխանութիւնը հենց այդպէս խօսի, թէ արդիւնքի համար ժամանակ է պէտք, ուրեմն իշխանութիւնն ընդամէնն արդարանում է:

«ԼՐԱԳԻՐ»

ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՄՏԱՎՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԿԱՌԱՎԱՐԵԼԻ «ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆԸ»

ԿԱՐԷՆ ՅԱԿՈԲՋԱՆԵԱՆ

Օրեր առաջ հեռուստատեսութեամբ ցուցադրուեց Սերժ Սարգսեանի եւ մի շարք պաշտօնեաների հանդիպումը՝ «Բարի թագաւորը եւ չար բոյարները» մոտիվներով:

Սարգսեանի անժպիտ ու մտահոգ դէմքը նպատակ ունէր հայ հեռուստադիտողին համոզել, որ երկրի ղեկավարն ապրում է շարքային մահկանացուների դարդ ու ցաւով, եւ հիմա կը լուծի մեր բոլոր խնդիրները, իսկ մինչեւ այդ չէր լուծում, քանի որ պարզապէս տեղեակ չէր խնդիրներից: Հիմա տեղեկացել է, ու թեւերը «քշտած» անցնելու է գործի:

«Տնտեսական քաղաքականութեան իրականացման առաջնահերթութիւնների վերաբերեալ» խորհրդակցութեան մասնակիցներից (յատկապէս՝ վարչապետից, ԿԲ նախագահից ու էկոնոմիկայի նախարարից) հեռուստադրերով փորձել էին ստանալ շառլիւնի դպրոցի 9-րդ մակարդակը չաղթահարած, նախագահի համար «դոշ տուող» ու հանդիպումն աւարտուելուն պէս նրա առաջադրանքները իրականացնելու պատրաստ կատարողներ:

Արձանագրենք, որ խորհրդակցութիւն-շոուի վերը նշուած դերակատարները ոչ միայն «Օսկարի», այլ նոյնիսկ «Ոսկէ ծիրանի» շրջանակներում տրուող մրցանակի չէին ձգտում, քանի որ «Ֆալշն» ու «Փաներան» շատ էր: Սա քննարկման ձեւական կողմի մասով:

Ինչ վերաբերում է նախագահի կազմակերպած հանդիպման բովանդակութեանը, ապա այն հակասութիւններով լեցուն էր:

Սարգսեանն ընդունեց, որ վիճակը վատ է եւ ժամկէտ դրեց, թէ մինչեւ Յունիս պէտք է ժողովուրդը զգայ, որ կեանքը դէպի լաւն է գնում: Իհարկէ չասուեց, թէ ինչպէս պէտք է կեանքը լաւանայ: Սարգսեանը մի կողմից յայտարարեց, թէ տարիներ շարունակ դրամի ուժեղացումը վատ է անդրադարձել մեզ վրայ, բայց, մեծ հաշուով, հասկացրեց, որ գոհ է որոշումներ կալացնող ու կարճ ժամանակ անց դրանք փոխել սիրող վարչապետից:

Սերժ Սարգսեանի խօսքում, ոչինչ չասող մտքերից գատ, կային նաեւ նեոքոլեբիկեան ցանկութիւններ ու նախատեսուող գործողութիւնների ծրագիր:

«Ակնկալում եմ, որ կոնկրետ պաշտօնեաներ աւելի մանրամասն հասկանան ապրանքների եւ, առաջին հերթին, առաջին անհրաժեշտութեան ապրանքների գնագոյացման գործընթացը՝ ի՞նչ գնով ձեռքբերուեց, որքա՞ն տրանսպորտային ծախսեր եղան եւ ի՞նչ գնով վաճառուեց», - յայտարարեց Սարգսեանը: Սա, իրականում, վերադարձ է դէպի համայնավարական տնտեսութիւն, որի նպատակն է մասնաւոր բիզնեսն ամբողջութեամբ իշխանութեան վերահսկողութեան տակ վերցնելը՝ «պայքարում ենք գնաճի դէմ» դեմագոգիկ լոզունգի քողածածկմամբ: Սա արդէն «մէկ ազգ, մէկ օլիգարխ, մէկ տիրացու, մէկ փեսայ» ծրագրի իրականացման գործնական քայլերի գնալու ցուցում էր ու այս ուղղութեամբ հաստատ կ'աշխատի կառավարութիւնը, որովհետեւ դա

անձամբ իրենց է պէտք, այլ ոչ թէ ՀՀ քաղաքացիների մեծամասնութեանը:

Կ'ուզենայի յատուկ ընդգծել, որ իր խօսքում Սարգսեանը երբեմն չափից շատ էր անկեղծանում: Դա տեղի ունեցաւ այն ժամանակ, երբ նա դիմեց էկոնոմիկայի նախարարին, ասելով. «Խնդրում եմ, որպէսզի կոնկրետ գործերով զբաղուէք»: Հաւանաբար, Սարգսեանն էլ է ընդունում, որ էկոնոմիկայի նախարարութիւնը միշտ չէ, որ կոնկրետ գործով է զբաղուում:

Խորհրդակցութեան քաղաքական ենթատեքստին անդրադառնալիս պէտք է նկատել, որ դրանով Սերժ Սարգսեանն անուղղակիօրէն պատասխանեց Լեւոն Տէր-Պետրոսեանի «ժողովրդավարական» քուէարկութեամբ իրեն ներկայացուած պահանջներին: «Մեսիջն» այն էր, որ ունէլ մէկին պաշտօնից չի հեռացնի ու իրեն ներկայացուած պահանջների որեւէ կէտ չի կատարի: Բայց, ամէն դէպքում, Ս. Սարգսեանի մօտ արտաքին հանգստութիւնից գատ նկատուում էր նաեւ որոշակի ներքին խուճապ: Խուճապն այդ ոչ թէ Տէր-Պետրոսեանի գործօնով էր պայմանաւորուած, այլ հնարաւոր իրական յեղափոխութեամբ, որը կարող է, ի հեճուկա Սերժի ու Լեւոնի ներդրած ջանքերի, տեղի ունենալ, քանի որ սոցիալական իրավիճակը պայթուցավտանգ է: Ահա այդ անկառավարելի գործընթացները զսպելուն են ուղղուած եւ Տէր-Պետրոսեանի հանրահաւաքները, եւ Սարգսեանի խորհրդակցութիւնները:

Մի խօսքով, շոուն շարունակում է:

«70Ր»
(Յապաւումներով)

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻ ՉԻՆՊԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արևմտեան Ամբիկայի Շրջանի

ԽՄԲԱԳՐԱՎԱՆ ԿԱԶՄ
ԳԱՐԻԻԷ ՍՈԼՈՅԵԱՆ
ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱՎԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆ

ՍԱՄՍՈՆ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՈՐՊԷՍ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ ԸՆՏՐՈՒԵՑ ԿԱԼԱՆՔԸ

Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրաւասութեան դատարանը Մարտ 15-ին երեք ժամ տեւած դռնփակ դատական նիստում որոշեց Հայ Ազգային Կոնգրէսի ակտիվիստ, յայտնի բռնցքամարտիկ Սամսոն Խաչատրեանի նկատմամբ որպէս խափանման միջոց կիրառել երկամեայ կալանքը՝ այն հիմնաւորմամբ, որ նա ազատութեան մէջ մնալով կը խոչընդոտի նախաքննութեանը:



Յայտնի բռնցքամարտիկ Սամսոն Խաչատրեան

Խաչատրեանի փաստաբան Արա Զաքարեանը դատարանից դուրս գալուն պէս դատական նիստը «թատրոն» եւ «դատի իմիտացիա» որակեց:

Փաստաբանը յայտարարեց, որ թէեւ խափանման միջոցը որոշելու համար սահմանուած 72 ժամը լրանում էր յաջորդ օր երեկոյեան, սակայն դատարանը մերժել է նիստը յետաձգելու միջոցառումները եւ իրեն բաւարար ժամանակ ու հնարաւորութիւն չի տուել նիւթերին պատշաճ ձեւով ծանօթանալու եւ առարկութիւնները ներկայացնելու:

Մարտի 13-ին ձերբակալուած ՀԱԿ ակտիւիստին կասկածում են իշխանութեան ներկայացուցչի նկատմամբ բռնութիւն գործադրելու մէջ ընդդիմութեան այս տարուայ Մարտի 1-ի հանրահաւաքում քաղաքացիական հագուստով անձանց հետ վիճակագրութեան դէպքի ժամանակ:

Փաստաբանի փոխանցմամբ՝ Խաչատրեանը դատարանում յայտարարել է, որ ինքը որեւէ ոստի-

կանի չի հարուածել, այնտեղ եղել են ինչ-որ անձնաւորութիւններ, որոնք կանանց ու երեխաներին հարուածներ են հասցրել, վիրաւորել են, իսկ ինքը փորձել է կանխել այդ գործողութիւնները:

«Ես սա համարում եմ քաղաքական որոշում: Հակառակ դէպքում այսպիսի խաչատրեանի դատարանութիւն տեղի չէր ունենայ», - ասաց Արա Զաքարեանը:

Անկախ պատգամաւոր Վիկտոր Դալլաքեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց, որ միջոցառում է, որպէսզի Խաչատրեանի խափանման միջոցը փոխուի:

«Դա Սամսոնի տեղը չէ: Իմ պատգամաւորական լիազօրութիւնների շրջանակներում օրէնքով սահմանուած կարգով ես փորձելու եմ, անհաջող եմ նրան», - ասաց Դալլաքեանը, ով երեկոյեան ժամանակաւոր պահման մեկուսարանում այցելել էր իր ընկեր Սամսոն Խաչատրեանին:

ՆՈՐՄԱԼ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԸՆԴԴԻՍՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՎԵՐՑՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԻՒՆԸ

Եթէ հերթական ընտրութիւններն անցկացուեն բոլոր նախորդների նման, ժողովրդին անպայման կ'ապստամբի, իսկ եթէ դրանք ընթանան նորմալ չունով, ապա ընդդիմութիւնը կը վերցնի խորհրդարանի մեծամասնութիւնը: Մարտի 14-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ նման համոզմունք յայտնեց «Նոր ժամանակներ» կուսակցութեան ղեկավար Արամ Կարապետեանը:

Կեղծ ընդդիմութեան թեմային՝ Արամ Կարապետեանը նկատեց, որ, օրինակ «Ժողովրդական կուսակցութիւնը»՝ ի դէմս Տիգրան Կարապետեանի՝ ընդդիմադիր չէ: «Ես չզիտեմ, թէ այդ մարդն իրեն ինչ է համարում: Նա ինքն էլ բազմաթիւ անգամներ յայտարարել է, որ ինքը կենտրոնամէտ է», - ասաց Կարապետեանը:

Դրան հակառակ՝ ՆժԿ ղեկավարն իրական ընդդիմութիւն համարեց ՀՅԴ-ին եւ «Ժառանգութեանը»: «ՀՅԴ-ին ես միշտ համարել եմ ընդդիմադիր, ով ինչ ուզում է՝ ասի: «Ժառանգութիւնն», այսպէս թէ այնպէս, մերոնքական է, ուղղակի եղբայրաբար խորհուրդ կը տայի պայքար ծաւալել ոչ թէ ռեպրեսիւ օրգանների դէմ, այլ կենտրոնանալ իշխանութեան բարձրագոյն օղակների դէմ պայքարի վրայ», - ամփոփեց Կարապետեանը:

«Ընդդիմութեան համար Հայաստանում աւելի ու աւելի բարենպաստ պայմաններ են ստեղծուած: Իշխանութիւններն են, որ պէտք է մտածեն երկրում իրականացուելիք փոփոխութիւնների եւ իրենց գործողութիւնների մասին, քանի որ իրենք կորցնելու բան չունեն», - կարծիք յայտնեց ՆժԿ ղեկավարը: Անդրադառնալով իրական եւ

ՆԱԻԱՍԱՐԴ ԱՐՔ. ԿՈՅԵԱՆԸ BENTLEY ԱԲՏՈՍԵՔԵՆԱՅ Է ՆՈՒԷՐ ՍՏԱՅԵԼ

«168 ժամ» թերթը գրում է. «Հայ Առաքելական եկեղեցու Արարատեան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նաւասարդ (Սամուէլ) արքեպիսկոպոս ԿՈՅԵԱՆը վերջերս «Bentley» մակնիշի աւտոմեքենայ է նուէր ստացել իր սանիկից: Այս տեղեկութիւնը մեր թղթակցի հետ զրոյցում հաստատել է եւ Արարատեան Հայրապետական թեմի մամուլի ղեկավարը եւ արքեպիսկոպոս ԿՈՅԵԱՆը:

պատասխանները առանձնապէս չեն տարբերուել Հայաստանեան միջին վիճակագրական օլիգարխի պատասխաններից: Մասնաւորապէս, ի պատասխան մեր հարցին՝ արդեօք այդ նուէրը չանձնուելու է եկեղեցուն, սոյն հոգեւորականը պատասխանել է. «Աղջիկ ջան, դա քո ինչ գործն ա, քո ինչ գործն ա՝ իմ անձնական կեանքի մէջ ես մտնում», - գրում է թերթն ու յաւելում, որ «Bentley» մակնիշի այն մոդելը, որ նուէրել է ԿՈՅԵԱՆին, տատանուում է 180-200.000 դոլարի սահմաններում:

«Մեր թղթակցի հետ հեռախօսազրոյցում վերջինիս տուած

«ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹԵԱՆ» ԾՐԱԳՐԵՐԸ ԿԸ ՀԵՌԱՐՁԱԿԻ «Ա1+»-Ը

«Ժողովրդական հեռուստատեսութեան» հոգաբարձուների խորհուրդը, որում ընդգրկուած են իրաւապաշտպաններ, հասարակական կազմակերպուցիչներ, քաղաքական գործունէութեամբ զբաղուող անձինք, առաջարկել է նախաձեռնութեան ծրագրերն ընդգրկել «Ա1+»-ի եթերում:



«Ժողովրդական հեռուստատեսութեան» հոգաբարձուներու խորհուրդի անդամներու մատուցիչ ասուլիսը

«Ժողովրդական հեռուստատեսութիւնը» նպատակ ունի իրականացնել ժողովրդի միակ՝ անաչառ լրատուութիւն ապահովելու պահանջը: Հեռուստատեսութեան մեկնարկը կարող է տրուել առաջիկայ մէկ տարուայ ընթացքում: Ծրագրի հայեցակարգը կը ներկայացուի առաջիկայում, իսկ մինչ այդ դրանց մօտաւոր նկարագիրը Մարտ 14-ին հրաւիրուած մամուլի ասուլիսում ներկայացրեց Մշակույթի նախկին փոխնախարար, Հեռուստատեսութեան եւ ռադիոյի ազգային յանձնաժողովի նախկին անդամ Կարինէ Խոզդիկեանը:

«Պատկերացնենք, որ «Ա1+»-ը հեռարձակուելու է օրուայ մէջ 10 ժամ: Այդ 10 ժամուայ մէջ «Ժողովրդական հեռուստատեսութեան» ծրագիրը կարող է լինել, ասենք, 3 ժամ: Եւ այդ ծրագիրը, երբ կը հեռարձակուի, կ'ունենայ յատուկ լոգօ», - նշեց Խոզդիկեանը: Հոգաբարձուների խորհրդի մէկ այլ անդամ՝ Երեւանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նաւասարդեանը ասաց, - «Հաղորդումները, որոնք համապատասխանում են այսօրուայ Հայաստանի հասարակական կեանքին, պէտք է հնա-

րաւորինս տեղ գտնեն «Ա1+»-ի եթերում՝ լինի դա ինտերնետային եթեր, թէ արբանեակով հեռարձակուող բովանդակութիւն»:

«Ա1+»-ի ղեկավար Մեսրոպ Մովսէսեանն ասաց, որ ինքը «ուրախ է մասնակցել էքսպերիմենտին»: Նա նաեւ Հոգաբարձուների խորհրդին ծրագիր է ներկայացրել ինտերնետային, արբանեակային հեռարձակում սկսելու վերաբերեալ:

Քանի որ այդ ծրագրի իրականացումը բաւականին ծախսատար է, յայտարարուեց, որ «Ժողովրդական հեռուստատեսութիւն» նախաձեռնութիւնը շարունակում է դրամահաւաքը:

Մեսրոպ Մովսէսեանի տեղեկացմեամբ, մինչեւ այժմ դրամահաւաքին մասնակցել է 30 հազար մարդ. - «Հաւաքուել է 1 միլիոն 250 հազար դրամ, 5410 դոլար, 110 եւրօ»:

Ասուլիսի բանախօսները յայտարարեցին, որ «Ժողովրդական հեռուստատեսութիւն» նախաձեռնութիւնը բաց է առաջարկութիւններ ընդունելու, դրանք ուսումնասիրելու համար:

«ԵԹԵ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԽԵԼՔ ՈՒՆԵՆԱՆ, Կ'ԱԶԱՏԵՆ ՔԱՂԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԻՆ»

Քաղբանտարկեալների եւ հալածեալների պաշտպանութեան կոմիտէն եւ քաղբանտարկեալների հարազատներն Գլխաւոր դատախազութեան առջեւ անցկացրին աւանդական ուրբաթօրեայ բողոքի ակցիան՝ պահանջելով ազատ արձակել քաղբանտարկեալներին: Ակցիային մասնակցում էին նաեւ նախկին արտգործնախարար Ալեքսանդր Արզումանեանը, Քաղբանտարկեալների եւ հալածեալների պաշտպանութեան կոմիտէի ղեկավար Կարապետ Ռուբինեանը, ՀՀՇ վարչութեան նախագահ Արամ Մանուկեանը, նախկին քաղբանտարկեալներից Գրիգոր Ոսկերչեանը, ՀԱԿ ներկայացուցիչներ եւ համակիրներ:

Կարապետ Ռուբինեանը Tert.am-ի հետ զրոյցում նշեց, որ իրենք ներդրում ունեն այն բանում, որ մինչ այժմ քաղբանտարկեալների մի մասն ազատ է արձակուել, սակայն դա իրենց չի բաւարարում: «Մենք ամէնեւին բաւարարուած չենք, որովհետեւ համարում ենք Հայաստանի համար խայտառակութիւն քաղբանտարկեալների առկայութիւնը: ՀԱԿ-ի վերջին բազմահազարանոց հանրահաւաքը կտրուկ պահանջ դրեց, որից ամենակտրուկը եւ ամենակարեւորը մնում է քաղբանտարկեալների անյապաղ ազատ արձակումը: Եթէ խելք ունենան մեր իշխանութիւնները, պիտի անպայման ընդառաջեն այդ պահանջին», - ասաց նա:

ՉԱՍԱԶԵԿՈՒՑՈՂՆԵՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՀԵՏ

Մարտի 16-ին ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը հանդիպել է ԵՆԽՎ Հայաստանի հարցով համազեկուցողներ Ջոն Պրեսկոտի եւ Աքսէլ Ֆիշերի հետ: Հանդիպման ընթացքում քննարկուել են Հայաստանում ժողովրդավարական ազատութիւնների հաստատման մասնաւորապէս քաղբանտարկեալների ազատ արձակման, հաւաքների ազատութիւնների հետ կապուած խնդիրներ: Յատուկ անդրադարձ է եղել Ազատութեան հրապարակում հանրահաւաքներ անցկացնելու անիրաւահափ խոչընդոտների վերացման անհրաժեշտութեանը, ինչպէս նաեւ մարտիմէկեան պայտուութիւնների բացառութեան հարցերին:

Քննարկուել են նաեւ ազատ եւ արդար ընտրութիւնների հետ կապուած հարցերը, ներքաղաքական լարուած իրավիճակի, ստեղծուած ծանր սոցիալական վիճակի, Հայաստանի տնտեսութիւնում օլիգարխի եւ մենատիրական համակարգի ապամոնոտաժման խնդիրները:

ԼՈՒՐԵՐ

«ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՅԵՐԸ ՍԿԱԾ ԵՆ ԳՏՆԵԼ ԻՐԵՆՑ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ», - ԸՍԱԾ Է ԹՈՒՐՔ ԳՈՐԾԻՉԸ

Ինչպես նախորդ տարի, այս տարի եւս թուրքերի մէջ Ապրիլի 24-ին պիտի իրականացուին Հայոց Յեղասպանութեան գոհերու յիշատակին նուիրուած ոգեկոչման ձեռնարկներ: Այս մասին Մարտ 15-ին Երեւանի մէջ իրականացուող «Հայոց Յեղասպանութեան գիտակցման կառուցումը թուրքերի մէջ» խորագրով միջազգային գիտաժողովին ժամանակ յայտարարեց թուրքիոյ Պահէջէնհիր համալսարանի Եւրոմիութեան ուսումնասիրութեան կեդրոնի ղեկավար, «Թըրքիշ Տէյլի» եւ «Վաթան» թերթերու մեկնաբան ձենկիզ Աքթարը: Ըստ անոր՝ մասնաւորապէս ոգեկոչման արարողութիւններ պիտի իրականացուին թուրքիոյ վեց քաղաքներու մէջ, ինչպէս՝ Սթամպուլի եւ Անգարայի:



Հայոց Յեղասպանութեան մասին միջազգային գիտաժողովի մասնակիցները

Լեն «Ալօս» թերթի միջոցով: 1973-էն սկսեալ թուրք հասարակութիւնը իր մէջ իրականացուցած է մեծ փոփոխութիւններ, իսկ 1999-էն՝ երբ թուրքիան սկսաւ Եւրոմիութեան անդամակցութեան միջազգային գործընթացը, այդ փոփոխութիւնները հասարակութեան շրջանակին մէջ նոր թափ ստացան: Ասիկա, ըստ բանախօսին, շատ կարեւոր գործընթաց է, որ այլեւս յետընթաց չի կրնար ապրիլ:

Ան նաեւ ընդգծեց, որ թուրքերի մէջ սկսած է վերականգնիլ հայերու մշակութային յիշողութիւնը, վերականգնուեցաւ Աղթամարի Մուրթ իսաչ եկեղեցին, վերակառուցման փուլին է Ատանայի Մուրթ Կիրակոս եկեղեցին, Անատոլի շրջանի մէջ նոյնպէս նման աշխատանքներ կը տարուին:

1915-էն ետք պատմութեան մէջ առաջին անգամ պետական պիւտճէի միջոցներով կը վերականգնուի Պալեաններու կողմէն կառուցուած հայկական եկեղեցին, կը կազմակերպուին հայերու վերաբերեալ ցուցահանդէսներ, Կոմիտասի վերաբերեալ շարժանկար կը նկարահանուի: «Իմ կարծիքով, թուրքերի մէջ հայերու յիշողութիւնը ժամանակի ընթացքին կը վերականգնուի, մարդիկ սկսած են գտնել իրենց հայութիւնը», - ըսաւ ան:

Բանախօսը յիշեց թուրքերի մէջ սպաննուած «Ալօսի» ղեկավար իւմբազի Զրանդ Տինքի խօսքերը՝ «Կարեւորը ցաւը բռնի ուժով ընդունիլը չէ, այլ խնդիրն ու անոր հուրիւնը հասկնալն է ու նկատելը»:

ձենկիզ Աքթարի խօսքով՝ յառաջիկային Սթամպուլի մէջ պիտի իրականացուին նաեւ հայերու վերաբերեալ ձեռնարկներ: Յատկապէս, պիտի կայանայ «Ատանայի կոտորածները» խորագրով գիտաժողով, Սթամպուլի համալսարաններու մէջ պիտի բացուին հայոց լեզուի ամպլոններ:

«Իմ կարծիքով ամէնէն կարեւորը թուրք հասարակութեան յիշողութեան վերականգնումն է: Կը վստահեցնեմ ձեզի, որ գիւղերու մէջ այդ գործընթացը աւելի արագ տեղի կ'ունենայ, այնտեղ աւելի թարմ են յիշողութիւնները: Սա երկար գործընթաց է, սակայն պէտք է փաստենք, որ սառույցը տեղէն արդէն շարժած է», - անդրադառնալով թուրքերի կողմէն Հայոց Յեղասպանութեան փաստի ընդունման՝ ըսաւ ան:

Բանախօսը յիշեցուց, որ 1973-էն առաջ՝ 1915-ի իրադարձութիւններու, հայերու վերաբերեալ թուրքերի մէջ որեւէ աշխատութիւն հնարաւոր չէր գրել, սակայն 1977-էն ետք, երբ Սթամպուլի մէջ սկսան լոյս տեսնել հայկական «Ժամանակ» եւ «Մարմարա» թերթերը, իրավիճակը փոխուեցաւ: Այժմ թուրքերի մէջ հայերը կը ճանչնան եւ կ'ընկա-

ՀԱԷԿ-ՈՒՄ «ՉԻ ԿԱՐՈՂ ՍՏԵՂԾՈՒԵԼ» ՖՈՒԿՈՒՇԻՄԱՅԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Միջուկային անվտանգութեան կարգաւորման պետական կոմիտէի նախագահ Աշոտ Մարտիրոսեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում վկայակոչելով ուսումնասիրութիւնների փորձը, ասաց, որ ձապոնիայում անցած շաբաթ տեղի ունեցած երկրաշարժի ուժգնութեամբ երկրաշարժ չափաստանում, ամենայն հավանականութեամբ, երբեք չի գրանցուի:



Երեւանի մօտ գտնուող հայկական աթոռակայանը

Մեծամորի ատոմակայանում, ըստ Մարտիրոսեանի, «չի կարող ստեղծուել այնպիսի իրավիճակ, ինչպիսին գրանցուեց ձապոնիայում անցած շաբաթ տեղի ունեցած երկրաշարժի եւ ցունամիի հետեւանքով»:

Նրա խօսքով, հայկական ատոմակայանի գործող էներգաբազայի վերագործարկումից՝ 1995 թուականից առաջ անցկացուած ուսումնասիրութիւնները ցոյց են տուել, որ ԱԷԿ-ի համար «հրապարակը ճիշդ է ընտրուած, եւ ատոմակայանի թէ՛ սէյմիկ, թէ՛ ընդհանուր անվտանգութիւնը տարեցտարի բարձրանում է»:

«Բնականաբար, աւելացաւ սէյմիկ հարուածի ժամանակ, այսպէս կոչուած գրունտի արագացումը, որը նոր հասկացութիւն էր: Նախկինում ատոմակայանի անվտանգութեան մակարդակը նախատեսուած էր 7 եւ 8 բալլի համար, հիմա արդէն վերահաշուարկ է կատարուած առաւելագոյն հնարաւոր երկրաշարժի համար: Եւ հաշուարկները ցոյց են տուել, որ ատոմակայանը ունի անհրաժեշտ ամրութեան պաշար, որպէսզի դիմակայի նման երկրաշարժի», - նշեց Մար-

տիրոսեանը՝ հաւաստիացնելով, թէ անվտանգութեան է՛լ աւելի խիստ պահանջներ կը դրուեն կառուցուելիք էներգաբազայի շինանարութեան ժամանակ:

Աշոտ Մարտիրոսեանը բացառեց, թէ ՀԱԷԿ-ում կարող է ստեղծուել այնպիսի իրավիճակ, ինչպէս ձապոնական Ֆուկուշիմայի ատոմակայանի ռեակտորներում, որտեղ կանգ էր առել հովացման համակարգը, քանի որ Մեծամորի ռեակտորը երկկոնտուրանի է. - «Ռեակտորի հովացումը կատարուած է երկրորդ կոնտուրի միջոցով, որը առանձին համակարգ է, առանձին պատնէշ է իրենից ներկայացնում: Նման իրավիճակ մեզ մօտ տեսականօրէն հնարաւոր չէ, որ լինի»:

Մեծամորի ատոմակայանի նախկին տնօրէն Սուրէն Ազատեանի խօսքով, Մարտիրոսեանի տուած գնահատականը «սպառնիչ չէ»: «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում նա նշեց, որ թէեւ «ընթացիկ խնդիրները լուծելի են», ՀԱԷԿ-ի անվտանգութեանը նկատմամբ ուշադրութիւնը պակասեցնել չի կարելի:

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ ՊԱՅՔԱՐ ԵՆ ՍԿՍՈՒՄ «ՀԱՎԱՅԱՅ ՔԱՐՈՋՉՈՒԹԵԱՆ» ԴԵՍ

Վրաստանի հայերը որոշել են պաշար սկսել երկրի մի շարք լրատուամիջոցներում սկիզբ առած «հակահայ քարոզչութեան» դէմ:

Առիթը վրացական ITV.GE ցանցային պարբերականում Մարտի 3-ին տեղադրուած նիւթն էր, որում պնդուած կար, թէ հայերն նպատակը Վրաստանի փլուզումն է:

Թբիլիսիի հայ համայնքի ակտիւիստներից Դաւիթ Մանուսաջեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասում է. - «Մենք բախուած ենք թբիլիսիում գործող Ադրբեյջանի դեսպանութեան շատ ակտիւ աշխատանքի հետ, որն աշուճախ գնում է փորձագէտներին, քաղաքական գործիչներին եւ նրանց յանձնարարում է մեզ՝ հայերիս համար ոչ այնքան հաճելի բաներ ասել»:

Մանուսաջեանի խօսքով վրացական լրատուամիջոցներում յայտնուած են նմանատիպ քարոզչական

հրապարակումներ, որոնցում երբեմն օգտագործուած են իբր հայերի կողմից արուող հակավրացական յայտարարութիւններ: Նրա խօսքով, սակայն, այդ յայտարարութիւնները երբեք չեն հնչել, եւ իրականում, պարզունակ սադրանք են:

Վրաստանի մայրաքաղաքում գործող ամենակապիտալ հայկական կառույցներից մէկը՝ Թբիլիսիի հայկական ասեամբլիան, նախատեսում է բրիֆինգներին շարք անցկացնել՝ նուիրուած վրացական լրատուամիջոցներում յայտնուած այս հրապարակումներին:

«Այդպիսի լրատուամիջոցները գիտակցաբար, թէ՛ ոչ, հակահայ քարոզչութիւն են ծաւալում, ամբողջովին հայ եւ վրաց ժողովուրդների միջեւ տեսլութեան հոնորաբանութիւնը», - նշուած է Թբիլիսիի հայկական ասեամբլիայի տարածած յայտարարութեան մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՏՐԱՍ Է ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼ ԱՂԻԲԵՋԱՆՑԻ ՈԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻՆ

Հայաստանը պատրաստ է վերադարձնել Հայաստանում գտնուող ադրբեյջանցի ռազմագերիներին: Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան մամուլի ծառայութիւնից NEWS.am-ին յայտնեցին, որ «ի կատարումն ս.թ. Մարտի 5-ին Սոչիում Ռուսաստանի Դաշնութեան նախագահի միջնորդութեամբ Հայաստանի եւ Ադրբեյջանի նախագահների պայմանաւորուածութեան՝ Մարտի 14-ին Կարմիր Խաչի միջազգային կոմիտէի երեւանեան գրասենեակի ղեկավարին է փոխանցուել հայկական կողմի պատրաստակամութիւնը՝ ԿԽՄԿ աջակցութեամբ ադրբեյջանական կողմին յանձնել հայկական կողմում գտնուող ադրբեյջանցի ռազմագերիներին»:

Ինչպէս աւելի վաղ յայտնել էր NEWS.am-ը, մարտի 5-ին Սոչիում տեղի է ունեցել Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեյջանի նախագահների եռակողմ հանդի-

պումը՝ Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի նախաձեռնութեամբ: Սա նախագահների եռակողմ ձեւաչափով 8-րդ հանդիպումն է:

Նախագահները համատեղ յայտարարութիւն են ընդունել, որում պարտաւորուել են ամենակարճ ժամկէտում աւարտել ռազմագերիների փոխանակումը, ձգտել բոլոր վիճելի հարցերը լուծել խաղաղ միջոցներով եւ կրակի դադարեցման գծի երկայնքով կողմերի մասնակցութեամբ անցկացնել հնարաւոր միջադէպերի հետաքննութիւն՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հովանուներքոյ եւ ԵԱՀԿ գործող նախագահի յատուկ ներկայացուցչի աջակցութեամբ:

Կարմիր Խաչի տուեալներով, Հայաստանում են գտնուում գինձառակցողներ՝ Անար Հաջիբեն ռու Ռոման Հուսէյնով, իսկ Ադրբեյջանում ներկայումս պահուած են 6 քաղաքացիական անձինք եւ 6 ռազմագերիներ:

ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՀԱՅԱԴՈՒԼ ՍԿԱԾ Է

Շարունակուած է 1-էն

Թէ ինչ պիտի ըլլայ իր հերթական քայլը, եթէ իր ակնկալիքները չարդարանան, Յովհաննիսեան ըսած է. «Դեռ չեմ որոշել յաջորդ քայլը, հնարաւոր է, որ կը շարունակեմ իմ հացադուլը, որքան կարողանամ: Զի բացառուած, որ այս հացադուլը, եթէ ոչ իշխանութեան շրջանում, ապա քաղաքացիական հասարակութեան մէջ տեղաշարժի կը բերի»:

Նոյն երեկոյան իսկ Րաֆֆի Յովհաննիսեանին այցելած են Հայ Ազգային Գոնիկէսի անդամներ՝ Ստեփան Դեմիրճեանը, Արամ Մարգարեանը, Անդրանիկ Քոչարեանը, Միանիկ Մախասեանը, Յովհաննիս Յովհաննիսեանը, «Նոր ժամանակներ» կառուցութեան ղեկավար Արամ Կարապետեանը, քաղաքացիական խումբեր, Քաղաքացիներու միութեան նախագահ Հմայեակ Յովհաննիսեանը եւ ուրիշներ:

ՍԱՐՍԱԾԵԼԻ ԵՐԿՐԱՇԱՐԺ ԾԱՓՈՆԻ ՄԷՋ ԵՐԿՐԻ ԱԹՈՍԱԿԱՅԱՆՆԵՐԸ ԿՏԱՆԳՈՒԱԾ



Մարտի 11ին, ձափոնի Հիւսիս արեւելեան շրջանի Սէնտա քաղաքի իսպանականի ակին 8.9 ուժգնութեամբ ահաւոր երկրաշարժ մը տեղի ունեցաւ: Երկրաշարժի սաստկութենէն «Յունամի»-ի ալիքներն սկսան տարածուիլ եւ մեծ աւերներ գործել ծովափնեայ շրջաններու մէջ: Շուրջ մէկ միլիոն հաշուող Սէտնա քաղաքը հիմնադրուած է Վեներներու թիւը կը հաշուէ մօտ 4000 հոգի նաեւ 15,000 կորսուածներ: Մեծագոյն աղէտը սակայն հիւլէական ուժով բանող ելեկտրակայաններէն երեքին պայթիւնն էր, որուն հետեւանքով ռատիոակթիւ ճառագայթներու փարոսան է: Այսպիսով թէ օդի մթնոլորտի եւ թէ ջրի ու բուսականութեան թունաւորում արձանագրուած է:

Նախագգուշական քայլեր առնուեցաւ թէ ձափոնի եւ թէ իսպանական Ովկիանոսի ակերը եզերող երկիրներուն մէջ (Չինաստան, Գորիա, Վիետնամ, Հաուայի, Թայուան, Ֆիլիպին, Ինտոնէզիա, Բերու):

ձափոնի տնտեսութիւնը հսկայական վնասներու ենթարկուեցաւ:

Երկրի արդիւնաբերութիւնը՝ մեծ ցնցումներու ենթարկուեցաւ, մասնաւորաբար ինքնաշարժերու եւ ելեկտրոնիք ճարտարարուեստի բնագաւառին մէջ: ձափոնի կեդրոնական դրամատունը իր պահուածքները զուտարներ շրջանառութեան մէջ դրաւ, տնտեսական ճգնաժամին առաջին առնելու համար:

Այս առթիւ աշխարհի տասնեակ մը երկիրներ ձափոնի աղիտեաններուն համար շտապ օգնութեան ջոկատներ առաքեցին, ինչպէս նաեւ ջուր, սննդամթերք, վրաններ եւ ծածկոյթներ: Սակայն պահանջը կայ դազաղներու եւ մեռելները ամփոփող յատուկ տոպրակներու:

Աղէտի գօտիէն առնուած 20 քիլոմետր հիւսիս փոխադրուած է աւելի քան կէս միլիոն բնակիչ:

Միջազգային պետական եւ ալլ բարեսիրական կազմակերպութիւններ (Կարմիր խաչ, Կարմիր Մահիկ եւայլն) սկսած են հանգանակութիւններ կազմակերպել, մասնաւորաբար դրամական աջակցութիւն ցուցաբերելու ձափոնի աղէտահարներուն: Կ'ըսուի թէ Համաշխարհային

երկրորդ պատերազմէն ետք ձափոն աշխարհի մեծ աղէտ չէր տեսած:

Ներկայիս աւելի քան երեք կենսական անհրաժեշտութիւն կը համարուի երկրի առեւտրա-արդիւնաբերական եւ բնակարանային շէնքերը ապահովագրել անակնկալ աղէտներու դէմ:

Այս բոլորի առընթեր ձափոնի իշխանութիւններուն համար՝ այսօրուան ամենաբարդ խնդիրը աթոմակայաններու անվտանգութիւնն ապահովելն է, որուն համար դիմում կատարուած է նաեւ ԱՄՆ-ի պատկան իշխանութիւններուն:

Հայաստանի Միջուկային անվտանգութեան կարգաւորման պետական կոմիտէի նախագահ Աշոտ Մարտիրոսեանը, «Ազատութիւն» ռատիոկայանի թղթակիցին հետ

գրոյցի ընթացքին ըսաւ թէ ձափոնի մէջ անցեալ շաբաթ տեղի ունեցած երկրաշարժի ուժգնութեամբ երկրաշարժ Հայաստանի մէջ, ամենայն հաւանականութեամբ կրնայ երբեք տեղի չունենայ:

Ըստ Աշոտ Մարտիրոսեանի Մեծամորի աթոմակայանին մէջ չի կրնար այնպիսի իրավիճակ ստեղծուիլ, ինչպէս որ անցեալ շաբաթ տեղի ունեցաւ ձափոնի մէջ, երկրաշարժի եւ հսկայ ծովաշարժի (Յունամի) հետեւանքով: Արդարեւ Հայաստանի աթոմակայանի ռէակթորներու մէջ գտնուող զովացնող համակարգը շրջապատուած է առանձին զոյգ պատնէշներով»: Նման իրավիճակ մեզ մօտ տեսականօրէն հնարաւոր չէ որ ըլլայ» ընդգծեց Ա. Մարտիրոսեանը:

ՀԱՐԻՐ ՀԱԶԱՐԱՒՈՐՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՐ



Լիբանանեան եւ կուսակցական դրօշներով կ'ուղղուին դէպի Ազատութեան հրապարակ

Մարտի 11-էն սակցութեան ղեկավար եւ Հանրապետութեան նախկին նախագահ Էմիլ Ժըմայէլ, «Լիբանանեան Ուժեր» կուսակցութեան ղեկավար Սամիր Ժափա, ՄԴԿ Կեդրոնական վարչութեան փոխատենագետ եւ Լիբանանի Խորհրդարանի անդամ Սեպուհ Գալիպեան եւ ուրիշներ:

Բոլոր ելոյթ ունեցողները կեդրոնացան ապօրէն գէնքին եւ անոր գինաթափումի անհրաժեշտութեան վրայ՝ նկատել տալով, որ այդ գէնքը վտանգաւոր է երկիրն համար եւ որպէս ուժ կը բանեցուի լիբանանցի ժողովուրդին դէմ:

Հրաժարեալ կառավարութեան վարչապետ Սաատ Հարիրի յայտարարեց, թէ ազատութիւն չկայ ժողովուրդի մը, որուն երկիրը, սահմանադրութիւնը, ապահովութիւնը

ու տնտեսութիւնը ենթակայ են գէնքին եւ գերի՝ գէնքին իշխող ձեռքերուն: Հարիրի պահանջեց գէնքը վերապահել միայն պետութեան:

Լիբանանահայութեան անունով ելոյթ ունենալով, ընկ. Սեպուհ Գալիպեան կոչ ուղղեց երկրի միւս խմբակներ՝ վար դնելու գէնքը եւ կերտելու հայրենիք ու պետութիւն: Նկատել տալով որ «Հըզպալլայի» գէնքը սկսած է աղաւաղել հայրենիքին դիմագիծը:

Ընկեր Գալիպեան ընդգծեց. «Բարձրաձայն ո'չ կ'ըսենք գէնքին եւ այդ պետութեան»: Ան նաեւ նշեց, թէ պետութեան բացակայութիւնը մեր հայրենիքի հողէն հեռացուցած է երիտասարդութիւնը ու պատճառ դարձած բազմաթիւ լիբանանցիներու ներառեալ լիբանանահայութեան կէսի արտագաղթին:

ՔԱԶԱՅԻ ԶՕՐՔԵՐԸ ԿՐ ՎԵՐԱԳՐԱԻՆ ԱՐԵԻԼԵԱՆ ԼԻՊԻՈՅ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Լիպիոյ հակամարտութիւնը կը խորանայ: Արեւմտեան պետութիւններ ականատես դառնալով հանդերձ Գազաֆիլի գործած վայրագութիւններուն, կը վարանին միացեալ կեցուածք մը ճշդել բախումները կասեցնելու ուղղութեամբ:

ՆԱԹՕ-ի անդամ պետութիւնները Պրիւքսէլի մէջ Լիպիոյ տագնապը քննարկելէ ետք առանց որեւէ եզրակացութեան փակեցին նիստը: ՆԱԹՕ-ի ընդհանուր քարտուղար Անտերս Ֆոկ Ռասմուսըն յայտարարեց, թէ մինչեւ յստակ եւ վերջնական ծրագիրի մը մշակումը, սխալ պիտի ըլլայ զինուորական որեւէ քայլի դիմել Լիպիոյ դէմ: Ուաշինկթըն եւ արաբական պետութիւններ կը պահանջեն ՆԱԹՕ-ի հովանոցին տակ առնել զինուորական քայլերը: Ուրիշներ կը մերժեն: Գերմանիա եւ Իտալիա աւելի զգուշաւոր մօտեցում կը ցուցաբերեն:

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> - Life Insurance - Health Insurance - Group & Individual - Long Term Care - Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> - Estate Planning - Will & Living Trust - Full Annual Review - Mortgage Protection - College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> - Workman's Compensation - Employee Benefits - Annuity - IRA - 401K & 403B
--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

A.A.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրածեղս է

Coverage & Protection should be on the top of your priority list.

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄՇԱԿՈՅԹՆԵՐ

ՄԿՐՏԻՉ ՊՈՒՆՏՈՒՔԵԱՆ

Նախորդ ամսուան սկիզբը Ֆրեզնոյէն հիւրընկալեցի լիբանանահայ դասընկերոջ Բարեկամը՝ պարոն Ա. Ճ. Զբօսաշրջիկ մը: Զիս պատուեց նուիրելով գիրք մը հետեւեալ խորագիրով «Cultures Of War», հեղինակը «Փուլիցըր» մրցանակակիր ձոն Տոուըր (John W. Dower, Ճ. Տ.), 900 էջ:

Ուրեմն, Ճ. Տ. կ'արտայայտուի ու կը վերլուծէ Բ. Համաշխարհային պատերազմին ընթացքին, Դեկտեմբեր 1941-ի Միացեալ Նահանգներու՝ Փրըլ Կարպըրի մէջ գինուորական պարտութիւնը (ձափոնի անակնկալ յարձակման իբրեւ հետեւանք), որուն ի պատասխան՝ Միացեալ Նահանգներ հակադարձեց հիւլէական ռմբակոծումով ձափոնի Հիրոշիմա ու Նակագաքի քաղաքները Օգոստոս 1945-ին «անպատիւ չմնալու համար»:

Հեղինակը կը վերլուծէ նաեւ 11 Սեպտեմբեր 2001-ի Նիւ Եորքի ողբերգութիւնը ու անոր ի պատասխան՝ Միացեալ Նահանգներու ներխուժումը ու ռմբակոծումները Իրաքի բազմաթիւ շրջաններն ու քաղաքները: 2005-ին՝ դարձեալ նոյն պատճառաբանութեամբ ու «Ֆիասքօ» կ'անուանէ Իրաքի պարագան:

Այս գրութեամբ պիտի անդրադառնամ ներկայի միջազգային տնտեսութեան, որ մոլթ ամպերով կը պատէ մեր շրջապատը տասը տարիէ ի վեր ու յարաբերական կապ մը ունի վերեւ յիշուած գիրքին հետ:

Պատերազմներ՝ ներքին թէ արտաքին թշնամիներու դէմ, յառաջ չեն բերեր տնտեսական արդիւնաբերութիւն որեւէ մէկ պետութեան: Կը քայքայուին տնտեսութեան մը խարխիսին ու դրամատնային համակարգը եւ կը պատճառեն անանկութիւններ. կը տկարանան դրամանիշն ու անոր գնողական արժէքը, երկիրը կ'առաջնորդեն դէպի անգործութիւն, անհատական եկամուտի նուազում ու չքաւորութիւն եւ կը վերջանայ կա'մ իշխանութեան փոփոխութեամբ, կա'մ անկումով: Առէք Լիբանանի պարագան:

Միացեալ Նահանգներու պարագային, իր «ներփակելու քաղաքականութեամբ», եղած է միշտ նախադրական՝ Փրըլ Կարպըրի ողբերգութենէն ետք՝ աւելի ճիշդը 1947-էն ետք, ու այսօր կը նշմարենք Մայրաքաղաք Արեւելքի խիստ վտանգաւոր շրջանին մէջ գինուորական լայնածաւալ ռազմափորձերու նոր եղանակ մը՝ կիրարկելու համար նոյն «ներփակելու քաղաքականութիւնը»:

Երբ ձորձ Քեննան ներկայացուց Միացեալ Նահանգներու կառավարութեան ներփակելու 1947-ին քաղաքականութեան սկզբունքները, ան կը կեդրոնանար համայնավարութիւնը չէզոքացնելու ու ձախողեցնելու վրայ: Բայց չէ՞ որ 1945-ին Խորհրդային Միութիւնը դաշնակից էր Արեւմուտքին, Գերմանիոյ պարտութենէն ետք: Ինչ բան փոխուեցաւ: Իսկ այսօր չմնաց համայնավար Խորհրդային Միութիւնը:

Թիւնը:

Ուրեմն:

Կ'ակնկալուի՞ արդեօք համայնավարութեան վերադարձը կամ վերածնունդը: Հաւանաբար: Պատմութիւնը միշտ կը կրկնուի:

Քսան տարիներ անցած են Խորհրդային Միութեան տապալումէն, որպէսզի հիմնուի արդիւնաբեր տնտեսութիւն՝ շուկայական համակարգի ծիրէն: Սակայն այս վերջինս չէ կարողացած ու չի կրնար իրականացնել այս կարճ ժամանակամիջոցին ընկերային ու տնտեսական բարեկարգում ու արդիականացում, որքան որ Ռուսիոյ ղեկավարները խոստանան: Ինչու՞:

Գոյութիւն չունի շուկայական համակարգի տնտեսական մշակոյթ, որպէսզի ռուսական եւ այլ 15 հանրապետութիւններու ընկերութիւնը բարեփոխուի ու արդիականանայ:

Գոյութիւն ունին, սակայն, ռազմաշուկայ արտայայտութիւններ ու դիրքորոշումներ՝ Միացեալ Նահանգներու եւ Ատլանտեան Ուխտի անդամ երկիրներուն ուղղուած: Այս կը նշանակէ՝ վերստին սպառազինում: Կասկածամտութիւնը կը տանի անվստահելիութեան:

Միացեալ Նահանգներ գոհ չէ նաեւ համայնավար Չինաստանի տնտեսական յառաջիարակքէն եւ կը ստիպէ Եուանի վերաբեկումը: Եթէ Չինաստանի տնտեսութիւնը այս բարգաւաճ վիճակին հասած է այսօր, պատճառը այն է, որ ան Բ. Համաշխարհային պատերազմէն ի վեր չէ մասնակցած որեւէ պատերազմի, բացի, 1956-ին, դրացի Ֆորմոզայի դէմ (այժմ՝ Թայուան),

Քեմօ եւ Մացու կղզիներուն տիրանալու համար:

Այսինքն չունի ներփակելու քաղաքականութիւն:


Եթէ թուենք Միացեալ Նահանգներու ներխուժումները Բ. Համաշխարհային պատերազմէն անդին, ցանկը երկար է ու կը շարունակուի տակաւին: Աֆղանիստանը երկրորդ ֆիասքօ մը կրնայ ըլլալ: Այդպէս չեղաւ՞ Խորհրդային Միութեան Աֆղանիստան ներխուժումին:

Անշուշտ այս կը նշանակէ սոլյարի աստիճանական անկումը, որուն պատճառով այսօր կը նշմարենք ոսկիի սակին բարձրացումը: (Կան նաեւ այլ պատճառներ, որոնք յառաջ բերած են պահանջարկի հսկայական ծաւալ):

Այսօր կը գրուի ու կը խօսուի դրամանիշներու պատերազմի մասին: Ասիկա մեզի կը յիշեցնէ նախորդ դարու 30-ական թուականներու արեւմտեան պետութեանց տնտեսական հոգեվիճակը, որուն յաջորդեց Բ. Համաշխարհային պատերազմը:

Անդին, Միջազգային Դրամական Ֆոնտը կը զգուշացնէ՝ չորդեգրելու հովանաւորական մաքսի դրութիւն, մինչ Թուրքը կը համոզէ դրացի արաբական երկիրներու հետ ստեղծել «տնտեսական ազատ առեւտուրի գօտի»: Ինչ ճակատագիր: Արաբ պետութիւններ չեն յաջողած 1958-էն ասդին կազմելու Զարաբական ազատ առեւտուրի գօտի, եւրոպական համայնքին նման: Սպասենք ու տեսնենք:

Մար.ք էջ 18



Seating is limited, first come basis. **A CONVERSATION WITH HASAN CEMAL**

MARCH 31st, 2011
THURSDAY, 8PM
AT THE UCLA BROAD HALL

SPEAKER:



Mr. Hasan Cemal
Senior Columnist at Milliyet Newspaper, author, and grandson of Cemal Pasha.

DISCUSSANTS:



Prof. Richard Hovannisian
Professor of Armenian and Near Eastern History and Holder of the Armenian Educational Foundation Chair in Modern Armenian History at the University of California, Los Angeles (UCLA).



Dr. Pamela Steiner
Inter-Communal Trust-Building Project. Fellow, FXB Center, Harvard School of Public Health & Affiliate, Harvard Humanitarian Initiative. (Great-granddaughter of Ambassador Henry Morgenthau to the Ottoman Empire).

Broad Art Center
240 Charles E. Young Drive
Los Angeles, CA 90095

For more information contact AGBU ASBEDS at: asbeds@agbuca.org. Admission is free.

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ՈՏՔԸ ԴՐԵԼ Է ՐԱՆԳՈՅՑԻ ՎՐԱՅ ԵՒ...

ԷԻԿԻԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

«Սրանք ուղղակի չեն պատկերացնում, թե ուր են հասցրել ժողովրդին: Սրանց աշխարհն ուրիշ կառուցուածք ունի: Սրանք գազի, ջրի, էներգիայի վարձերը վճարելու խնդիր չունեն եւ չեն էլ մտածում, որ ազգի ութսուն տոկոսը օրուայ հացի խնդիրը չի կարողանում լուծել: Սրանք բոլոր ժամանակներում իշխանութիւն են եղել եւ լաւ էլ գիտեն, որ մեր նմանների երեխաները չեն կարող որեւէ հիմնարկում, առանց իրենց «դաբրոյի», աշխատանքի տեղաւորուել»:

«Սրանք չեն էլ պատկերացնում, որ շատ ընտանիքներում երեխաները դպրոց չեն ուզում գնալ, որովհետեւ կօշիկ չունեն, պաշտակ չունեն, չեն էլ պատկերացնում, որ դպրոցական աղջիկներն ամառում են ամբողջ տարին մի շորով դասարան մտնելուց: Սրանց ուղեղների բջիջների կառուծուածքը պարզապէս փոխուել է, սրանք, որ ամէն մի փոշտոցից յետոյ թոնում են եւրոպաներ՝ բժշկական ստուգումների, չեն էլ պատկերացնում, որ տասնեակ հազարաւոր թոշակաւուներ փող չունեն նոյնիսկ ճշուամբ կարգաւորող հաբեր գնելու: Սրանք իրենց աշխարհն են ստեղծել ու չաւերժական խրախճանքի մէջ են: Սրանք ուզում են, որ մենք գլխիկոր, հնազանդ տանենք ամէն ինչ ու յանկարծ չփորձենք խանգարել իրենց՝ «երկիր կառուցելու առաքելութիւնը» իրականացնելուն: Սրանք չեն էլ պատկերացնում, որ կայցասման մի ալիք՝ անդեկավար ու անկառավարելի, որ կարող է գալ ու սրբել իրենց այդ աշխարհը»,- մի շնչով, առանց դադարի, ասաց պատերազմում հաշմանդամ դարձած ընկերս ու, նայելով աչքերիս, աւելացրեց՝ դէ հիմա դու ասա:

Ես լռում եմ սովորականի նման՝ նրան չբարկացնելու, հանգստացնելու համար, որովհետեւ նա կարմրում է խօսելիս, եւ ես միշտ վախենում եմ՝ յանկարծ նորից չվատանայ: Նա գլխից է վիրաւորուել եւ միանգամից վատանում է, երբ նեարդայնանում է: Իսկ ես գիտեմ, որ ինչ էլ ասեմ, նրան հունից հանելու է. նա խնդիրներ լուծելու միայն մի ճանապարհ գիտի:

Նախկինում ես ասում էի, որ պէտք է ստիպենք իշխանութիւններին

իրն փոխուել, նահանջել, բայց նա երբեք չէր համաձայնում: Ես էլ վաղուց չեմ հաւատում ասածներին, բայց չեմ էլ խոստովանում ընկերոջս: Ես համոզուել եմ, որ միեւնոյն է՝ իշխանութեանը չես կարող ստիպել անել այնպիսի քայլեր, որոնք «ձեռնառու» չեն իրեն: Որովհետեւ իշխանութեան մէջ այն մարդիկ չեն, ովքեր գիտակցում են ազգային շահը, ունեն պետական մտածողութիւն: Ես նրանց մէջ չեմ տեսնում մարդկանց, որոնք ազգային շահի, այսինքն՝ պետութեան մասին են մտածում: Նրանց պետութիւնը իրենց թիմն է, նրանց ազգային շահը իրենց բիզնեսն է:

Ես ընկերոջս՝ Գարիկին, չեմ կարողանում բացատրել, որ պետութեան մասին իր եւ նրանց ունեցած պատկերացումները հակադիր են: Ձեռ կարող նրան ասել, որ դու ուզում ես հանգուցաւորուածում, իսկ իշխանութիւնը ոտքը դրել է հանգուցի վրայ եւ սեղմում է: Իշխանութիւնը ստեղծուած է այդ հանգուցաւորուածումն անընդհատ յետաձգելու համար: Երբեմն խաբւում ես՝ սպասելով, որ անա մի բան կը փոխուի, մի բան տեղի կ'ունենայ, բայց դա ընդամէնը ինքնախաբէութիւն է. նոյնի շարունակականութիւնը նորից ապահովուած է:

Ինչ-որ մի միամիտ ասել է, որ հայերը սոցիալական բռնատ չեն անի, բայց սոցիալական բռնատ վաղուց է սկսուած: Մինչեւ հիմա դա արտայայտուում է կարծես թէ միայն արտագաղթով: Արտայայտման յաջորդ դրսեւորումն այսօր




երեւանի եւ տարբեր քաղաքների փողոցներում արդէն զգալ է տալիս: Նոյնիսկ ակտիւ ընդդիմութիւնը չի տեսնում, որ ինչպէս Շեքսպիրն է ասել, ժամանակն արդէն յօդախախտ է եղել:

Նոր տարուց յետոյ, երբ հանդիպել էի Գարիկին, հարցրեց. «էդ ի՞նչ է էդ 3G, 4G-ն, որ վարչապետը խօսում է, ասեց՝ Հայաստանի ամբողջ տարածքը ծածկել է»: Ես սկսեցի բացատրել: Գարիկն անմիջապէս հակադարձեց, թէ վարչապետը գիտի, որ մեր գիւղերում ծերերն են մնացել. նրանք էդ G-երը ի՞նչ պիտի անեն:

Տիգրան Սարգսեանը միւս վարչապետներից տարբերուեց նրանով, որ խօսեց «հայկական աշխարհի» մասին: Բայց իմ, Գարիկի ու վարչապետի հայկական աշխարհները նոյնպէս չեն համընկնում, նոյնիսկ համեմատութեան եզրեր չկան: Մեր հայկական աշ-

խարհում մարդիկ են, նրա աշխարհում՝ աներեւոյթ հասկացութիւններ: Մեր հայկական աշխարհում թերսնուող հայ երեխաներն են, իսկ նրա աշխարհում՝ ուռսալեզու դպրոցներ յաճախող երեխաների տեսլականը: Մեր հայկական աշխարհը կիսադատարկ գիւղերն են, նրանք՝ ֆինանսական կենտրոն Դիլիջանը կամ Դավոսի վերածուող Մաղկաձորը:

Մեր հայկական աշխարհում ես փոքրացել էի, հաւասարուել գետնին, երբ Հայաստանի նախագահի կողքին կանգնած հարեւան վրաստանի նախագահ Սահակաշվիլին յորդորում էր հայերին, որ չլքեն Հայաստանը: Ի՞նչ պէտք է անենք ես ու Գարիկը, որպէսզի մեր պաշտօնեաները տեսնեն իրական հայկական աշխարհը: Ես այդպէս էլ ընկերոջս ոչինչ չպատասխանեցի, քանի որ նա միայն մեկ ճանապարհ գիտի:



Ազգային Երգերու Երեկոյ

Կազմակերպութեամբ՝

ԿԱՅԾ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Նուիրուած՝

Ս. Գ. Ք. Բ. Կ.

Կայծ Երիտասարդական Միութեան

100 ԱՄԵԱԿ-ին

Երեկոն պիտի խանդավառէ Լոնպոնէն սիրուած Երգիչ՝

ՍԱՄՈՒԷԼ ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՀԲԸՄ ԱՐՏԱՌԱԶԳ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲ
ԽՆԴՈՒՔԻ ԵՐԵԿՈՅ

ՄԵՆՔ

ԱՍԱՆԿ ԵՆՔ...

ԿԱՏԱՐՈՒԹՅԱՆԻՐ՝
ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆԻ



ԸՆԲԱԹ, 2 ԱՊՐԻԼ, 2011, ԵՐԵԿՈՅԵԱՆ ՓԱՄԸ 7:30-ից
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՀԲԸ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԳՐՈՒՄԻՆ ՄԷՋ
ՄՈՒՏՔԻ ԿՈՒԼԻՐ՝ \$50 (ԿԵՐԱՌԵԱԼ ՄԱՅՈՒՄԻՉԸ)

ՏՈՒՑԵՐԻ ՀԱՐՄԸ ԳՈՒՄԸ ՀԲԸ ԳՐԱԿԱՆԱԿԸ (626) 794-7942
(626) 710-3805
Tickets are also available at www.itsmyseat.com

ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՅԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՕՎԱՐԺԱՐԱՆԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԶԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ

15 դարեր առաջ Հայ միտքն ու հոգին ընդդիմացալ թշնամիին կամքին, պայքարեցաւ եւ կռուեցաւ՝ պարտադրելու համար իր կամքը, դէմ դնելով պարսիկ հսկայ զօրքին, գիտակից մահով անմահացաւ՝ բոլորին տալով օրինակը կամքի ազատութեան անգիջելիութեան:

Այս է պատճառը, որ մէկ ու կէս դար է կը տօնենք եւ կը կազմակերպենք, Վարդանանց հերոսներու յիշատակին նուիրուած հանդիսութիւններ, որպէսզի Աւարայրի նահատակներու ճամբով մեզի հասած պատգամը՝ կամքի ազատութեան անխափանելիութիւնը փոխանցենք սերունդէ սերունդ:

Վարդանանց ճակատամարտի սոնակատարութիւնը յատուկ տեղ ունի նաեւ Հայ Քոյրերու Վարժարանին ներս, ուր Վարդանանքի օրը տեղի կ'ունենան աշակերտական յատուկ Պատարագ, հանդիսութիւն եւ թատրոն:

Այս տարուան հանդիսութիւնը

ցելու օրուան հանդիսութեան:

Պաշտօնական հանդիսութիւնը սկսաւ, նոյն օրը յետ Պատարագին, վարժարանի Դանիէլեան սրահէն ներս, ներկայութեամբ՝ ծնողներու, հիւրերու, ուսուցչական կազմին եւ բոլոր դասարաններու աշակերտութեան: Հանդիսութիւնը սկիզբ առաւ օրուան խորհուրդը արտայայտող «Նորահրաշ» շարականի երգեցողութեամբ, որուն յաջորդեց Հայաստանի Հանրապետութեան քայլերգը: Աուրիսին պատշաճ բացման խօսքով հանդէս եկաւ հայերէն լեզուի դասատու Տիկ. Մարօ Գուլումճեան: Ան ներկայացուց հայոց պատմութեան կեանքէն ներս յատկանշական նկատուող Վարդանանց սօնը՝ եւ քաջալերեց աշակերտները որ շարունակեն իրենց ուղին Վարդանի եւ ընկերներու հաւատքով:

Օրուան դերակատարները բոլորն ալ արդարացուցին իրենց ուսուցիչներու աշխատանքը: Հանդիսութիւնը կ'ընդգրկէր Վարդանանց ճակատամարտի նուիրուած



նախօրեակին Հայաստանի մէջ տիրող կացութիւնը եւ ճակատամարտի պատրաստութիւնը, իշխաններու, հայ տիկիներու եւ ժողովուրդի պատրաստակամութիւնն ու նուիրումը պայքարելու թշնամիի կամքին դէմ եւ ի գին ամէն զոհողութեան տէր կանգնելու հայրենի հողին ու քրիստոնէական հաւատքին, ապա ճակատամարտի աւարտը ֆիզիքական պարտութիւնն ու կամքի յաղթանակը:

Յրդ դասարանի հայերէն լեզուի ուսուցչուհի Տիկ. Մարօ Գուլումճեանի բժախնդիր աշխատանքին արդիւնք՝ այս տարի եւս հիանալի էին Յրդ դասարանի սղաքն ու աղջիկները, որոնք գեղեցկօրէն եւ համոզիչ ձեւով ներկայացուցին իրենց վստահուած դերերը:

Այս տարուան նորութիւնն էր Բարեկենդանի ներկայացումը, որ վստահուած էր երկրորդ դասարանի աշակերտներուն, որոնք Օր. Մարի Թիւթեւեանի առաջնորդութեամբ ներկայացուցին Բարեկենդանի հայկական սովորութիւնները, երգելով եւ արտասանելով մինչ ներկաները եւ վարժարանի բոլոր աշակերտները հիւրասիրուեցան հայկական խմորեղէններով, եւ արձակուելու պահուն աշակերտութիւնը նախօրօք պատրաստուած դիմակներով զարդարուած ամբողջացուցին Բարեկենդանի օր-

ուան խորհուրդը: Ոգեկոչումի աւարտին, ներկաներն ու աշակերտները հոգեկան բաւարարութեամբ եւ գոհունակութեամբ լսեցին վարժարանիս Տնօրէնուհի՝ Քոյր Լուսիայի եզրափակիչ խօսքը, որ յորդորեց աշակերտները, հաւատարիմ մնալու իրենց նախնիներու աւանդին, անոնք իրենց կեանքը գոհեցին ի գին Քրիստոնէական հաւատքին ու հայրենիքին անկորնչելիութեան: Ապա Քոյր Լուսիա իր շնորհակալական խօսքը ուղղեց Տիկ. Մարօ Գուլումճեանին եւ երաժշտութեան ուսուցչուհի՝ Տիկ. Վարդուհի Պաղտասարեանին եւ բոլոր հայերէն լեզուի դասատուներուն՝ իրենց կազմակերպած ուսանելի հանդիսութեան համար:

Աշակերտութիւնը սրահէն բաժնուեցաւ «Տէրունական Աղօթք»ի երգեցողութեամբ, մինչ բոլորին մտքերուն մէջ անջնջելի պիտի մնայ Վարդան Մամիկոնեանի, յանդգնութիւնը, Ղեւոնդ Երէջի ճակատամարտի նախօրեակին արտասանած ճառը, գինուորներու կարգապահութիւնն ու հայրենասիրութիւնը, հայ տիկիներու նուիրումն ու ժրաջան աշխատանքը՝ մեզի տալով օրուան պատգամը:

ՄԱՀ ՈՉ ԻՄԱՅԵԱԼ ՄԱՀ Է, ՄԱՀ ԻՄԱՅԵԱԼ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ Է

Թղթակցութիւնը վարժարանէն



տեղի ունեցաւ, Հինգշաբթի, 3 Փետրուար 2011ին: Առաւօտեան ժամը 9:00ին սկսաւ աշակերտական Ս. Պատարագը՝ նուիրուած Վարդանանց նահատակներու յիշատակին, օրուան պատարագին էր՝ Կլենտէյլի Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու ժողովրդապետ՝ Տէր Գրիգոր Շահինեան, որ տուաւ օրուան պատշաճ քարոզ մը, հարցադրելով թէ ինչու՞ այս ճակատամարտը կենսական է հայ ժողովուրդին համար, ապա պատասխանեց ըսելով՝ պարզապէս անմոռու է երկու նպատակով՝ պաշտպանելու համար Քրիստոնէական կրօնքը եւ հայրենիքը, Տէր Գրիգոր իր քարոզին մասնակից դարձուց բոլոր աշակերտները, որոնք մեծ հետաքրքրութեամբ մասնակցեցան պատասխանելով հարցումներուն: Նոյն օրը երրորդ դասարանէն վեր բոլոր աշակերտները հաղորդուեցան Վարդանանց քաջերու օրինակով եւ պատրաստուեցան մասնակ-

եւ դասականացած խմբային արտասանութիւններ եւ խմբերգներ, նոյնիսկ մանկապարտէզի աշակերտները յաղթանակի գիտակցութեան հպարտութեամբ՝ ոգեկոչեցին իրենց Վարդանի թոռները ըլլալու իրողութիւնը, երգեցին նոյն հպարտութեամբ և քաջութեան վարակիչ զգացումով:

Յիշենք որ սրահը զարդարուած էր պատշաճ որմագրերով եւ որմագրութիւններով, իսկ հանդիսութեան տեւողութեան կը ցուցադրուէր Համակարգիչի ուսուցիչ՝ Պրն. Արա Զուլճեանի կողմէ Power point ծրագրով յատուկ պատրաստուածը, ստեղծելով օրուան պատշաճ մթնոլորտ հանդիսասրահէն ներս:

Վերջապէս սպասուած պահը հասաւ, ծնողներ, աշակերտներ, հիւրեր, բոլորը անհամբեր կը սպասէին ներկայացումին, ուր երրորդ դասարանի փոքրեր ներկայացուցին Վարդանանց ճակատամարտի

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծահասակներու և մանուկներու Քայքայիչ քրոնիկ: Գլխացաւ, վզի, սկզբի, յոտային և սկզբային ցտեղ: Ինքնաշարժի վթարի եետևանքով պատահած վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 for USA

* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

massisweekly.com
updated every Friday

ԱՐՄԷՆ-ՀԱՅԵՐԻ ՆԱԽՆԻՆԵՐԻ ՀԱԲԱՏՔ

ՊՕՂՈՍԼԱԳԻՍԵԱՆ
(Շարունակում անախորդ թիվին)

Հայ գրականության մեջ, իրենց հին աստուածների հաւատքի փիլիսոփայութիւնը հռչակուել է որպէս գեղագիտական՝ աշխարհայեացք: «Տիր» աստուծոյ գարմից հայոց բանաստեղծութեան արքայ, հայոց հին կրօնքի՝ «հեթանոս»ութեան, հաւատքի ոգեկոչման շարժման ռահլիրայ՝ Դանիէլ Վարուժան, երգեց իր ցեղին սիրտը, երգեց իր ցեղի հին աստուածներին, իր տիեզերական շունչի տաղերով ինչպիսի՜ր ոգու պոռթկումով փառաբանեց նրանց տօնախմբութիւնները: Վարուժանի երգին հետեւեցին «Տիր»ի գարմից ազգի անցեալի հաւատքը ոգեկոչող ուրիշ իմաստուններ՝ Լ. Շանթ, Կ. Զարեան, Հ. Սիրունի, Ա. Ահարոնեան, Լ. Էսաճանեան եւ շատ ուրիշներ, հայոց մայր ոստանի շատ արեւորդիներ: Հայերին կուռի առաջնորդելու բամբեր գարկող մի իմաստուն արեւորդի՝ Բաֆֆի անունով, աղաչել էր՝ «Ով հայոց հին աստուածներ, դո՛ւք փրկեցէ՛ք մեզ», սպաննել էին նրանց ո՞վ պիտի փրկէր իրենց, թող բարձրանային իրենց «Խաչ Քար» լեռան քարէ սիրտ Արարատի գահ, վար բերէին

իրենց հին աստուածներին, թող գնային Նեմրոթ գագաթի նրանց սրբավայր, փլած աստուածներին նորէն մարդացնէին, բերէին իրենց փլած տաճարներ, նրանց հետ կուռի ելնէին: Ասում են հայոց հին աստուածների մեհեան են պատելու մայր ոստանում: Հայոց աշխարհի արեւորդի բազում մարդիկ, Վահագնի, Միհրի ծնունդն են տօնախմբում հեթանոս նախնիների Գառնի տաճարում: Ունկնդրե՞լ էք նրա ատրուշանը բոլորած քրմուհիների հին աստուածներին նուիրուած երգերը: Հազար, հազար տարիներից եկած նրանց հնչիւնները գարնուելով տաճարի որմերին, անդրադառնալով անդնդախոր ձորի կողերի ժայռերից, իրենց Խոսրով արքայի անտառների սօսափիւնը գրկած գալու են հայոց աշխարհին աւետելու իրենց նախնիների հին աստուածների վերադարձը: Հազար-հազար երնէկ այդ աւետիսի լոյսը ըմբոշխողներուն:

Հաւատքը հայոց խանինների եղել է ոչ թէ սնահաւատութեան վրայ հիմնուած հաւատալիք, ոչ թէ բնութեան երեւոյթների անբացատրելիութիւնը, այլ նրանց պարզեւած խորհուրդի ընկալման իմաստնութիւնը՝ լոյսի, կրակի, գեղեցկութեան, մայրութեան, սիրով, ու-

ժի, յաղթանակի, կեանքի փառաբանումը: Հաւատացել էին, որ «Կենաց Մառ»ը իրենց աստուածներն էին արարել, այն Հայոց Լեւոնաշխարհն էր: Իրենց նախնի Արատտա պետութեան Այրարատ աշխարհի յարմար տեղանքներում, բարձր ժայռեր շարել, անցքեր բացել տարբեր ուղղութիւններից, դիտել տիեզերքում փայլող աստղերը, որոնել նրանց իմաստնութիւնը: Տիեզերքի, բնութեան պաշտամունքին նուիրուած ժողովրդական հաւատալիքներ ստեղծել, գուշակութիւններ կատարել: Յարութեան, ջրի, ծաղկունքի, կեանքի, բնութեան գարթօնքի, հասունացած բերքի երախայրիքի մատուցման տօնախմբութիւններ կատարել իրենց աստուածների մեհեաններում, կեանքի վայելքի հրճուանքով արբեցել: Աղօթե՞լ, ոչ, մեհեաններում իրենց աստուածների տիեզերական խորհուրդն էին փառաբանել, գոհունակութիւն յայտնել: Աշխատանքով էին իրենց հանդերձում բարիք արարել, առատութիւն էր եղել իրենց աշխարհում, ոչ ոք չի մտել քարայրներ, այժի մորթով պատել իրեն, արմտիքով սնուել, ճգնել, աղօթել իրեն ու երկրին փրկութիւն աղաչելու աներեւոյթից, ամլացած մարդիկ...: Չի մարել հայոց հոգիներում իրենց նախնիների պաշտամունքի հաւատալիքների յուշը, հազար-հազար տարիներ այն շա-

րունակում են տօնախմբել իրենց լեռներում, իրենց շէններում, իրենց ոստաններում:

Հայոց հին հաւատք, նրան բնորոշող դիցաբանութիւն է ստեղծուած եղել, որ նրա հոգեւոր մշակոյթը, նրա աշխարհայեացքն էր: Բոլոր հին հաւատամքները դիցաբանութիւն են ունեցել: Յունական դիցաբանութիւն, կարծես մի հնամենի հասարակութեան պատում է այն: Զարգացած իմաստուն հասարակութիւն, մարդուն շնորհել կրակ, արուեստ, արհեստներ, գիր, երկրագործութիւն ուսուցանել: Համաշխարհային դիցաբանութեան կատարեալ, դասական ձեւը յունականն է, այն համամարդկային բնոյթ ունի, արարչութեամբ ու կեանքի վայելքով լեցուն մարդացած աստուածների աշխարհ: Հին, եւ նոր արուեստագէտներ, մտաւորականներ, գրողներ այդ դիցաբանութեան մէջ արտացոլուած առասպելներ, կերպարների վերաբերեալ խորհուն, հիացմունքի արժանի երկեր են ստեղծել: Աստուածների առասպելական աւօրեայի ներշնչանքով թատերգութիւններ յորինել, այն բեմականացրել իրենց քարաշէն բացօթեալ թատրոններում: Թատրոններ որի բարձր շարքերին նստած մարդիկ, դերակատարների խօսքը լսել էին ինչ-

Շաբ.ք էջ 19

MUNICIPAL ELECTIONS

Register to vote by
March 21, 2011

★ ★ ★
Polls Open
7:00 a.m.
to 8:00 p.m.

★ ★ ★
ELECTION CENTER
GPD Community Room
131 N. Isabel Street
Glendale, CA 91206

Every Vote Counts

GLENDALE VOTES

★ ★ ★ ★ ★

April 5,
2011

★ ★ ★ ★ ★

VOTE ON
Glendale City Council,
Glendale Unified School District
Board of Education,
Glendale Community College
Board of Trustees,
Measure S

For more information:
www.GLENDALEVOTES.org
or call (818) 548-4000

Follow us on twitter at **cogCityClerk**

ԿԼԵՆՏԵԼԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՔԱՂԱՔԱՅԻՆ
ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

ԱՊՐԻԼ 5, 2011
ԵՐԵՔՇԱԲԻ

ՏԵՂԱՄԱՍԵՐԸ ԲԱՑ ԵՆ
ԱՐԱԻՕՏԵԱՆ ԺԱՄԸ 7-ԷՆ
ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 8-Ը

ԲՈՒԷԱՐԿՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ԳՐԱՆՑՈՒԹԻՒՄ ԻՆՉԵՒ ՄԱՐՏ 21, 2011

ԲՈՒԷԱՐԿԵԼ՝

***ՔԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

***ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ**
ՈՒՍՈՒՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈԼԷՃԻ**
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴ

***ԲԱՆԱՉԵՒ 'S'**

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ
(818) 548-4000
WWW.GLENDALEVOTES.ORG

ՅԱԿՈՒ ՊԱՐՈՆԵԱՆԸ ՏՂԱՄԱՐԴՈՒ, ԿՆՈՋ ԵՒ ԱՇԽԱՐՀԻԿ ՍԻՐՈՅ ՄԱՍԻՆ

ԱՐՄՆԵՆ ԳԼՃԵԱՆ

Պարոնեանը Մարդկանց Երկրի իտալական ձգմարիտ, Բարի, Գեղեցիկ գեղարուեստական պատկերի կենտրոնում տեսել է Տղամարդուն ու Կնոջը, իբրև իրական կենսաբեր ու կործանարար ուժերի կրողներ: Առաջատարը Տղամարդն է՝ իրականության Օլիմպոսում Արամազդի ցանկալի դերին չափազանց համարում էր: Նա գլխավոր դերակատարում էր եւ պարտաւորութիւն ունի մարդկութեան կեանքը, կենցաղն ու բարքերը գայթակղութիւններից զերծ պահելու, մարդկութեան ճիշտ ընթացքն հսկելու եւ ապահովելու գործում: Տղամարդու կողքին անփոխարինելի տեղ ունի Կինը: Նրա մէջ միահիւսուած են կառուցողական եւ կործանարար ուժերը: «Օրէնքները հաստատողները այրերն են, իսկ բարքերը հաստատողները կանայք են» (7, 331),- նշել է Պարոնեանը: «Շատ անգամ կնկան մը արտասուքին մէկ շիթը ովկիանոսին ալիքներէն աւելի վտանգաւոր է. գիտէ՞ք որքան նաւաբեկութիւններ եղած են եւ կ'ըլլան շիթ մը արտասուքի լայնածաւալ ծովուն մէջ» (5,131): Կնոջ կոչումը, բնութիւնից սահմանուած, շատ բարձր է, սակայն արդի դարաշրջանում, ցաւօք, չափազանց հողեղէն կերպարանքով է ներկայանում: «Կնոջ գեղեցկութիւնը կը հաստատէ, որ ժամանակաւ դրախտի բնակիչն էր նա» (7,339), ինչը չեն ասի նրա արդի կերպարի մասին: Գրութիւնը շտկելու, մարդկանց Երկրի բարձր իտալները վերականգնելու համար կանայք պարտաւոր են իրենց ուղին բանականութեան լոյսով լուսաւորել. «Բնութիւնը կնոջը ըսած է՝ գեղե-

ցիկ եղիր, եթէ կրնաս, խելացի, եթէ կ'ուզես, բայց պէտք է որ պատուաւոր ըլլաս» (7, 335): Գրողն այդ խնդրում կարեւորել է նաև Տղամարդու դերը՝ նրան խորհուրդ տալով ըմբռնել Կնոջ հակասական էությունը եւ խելացի վերաբերուել նրան. Առաջին Տղամարդը՝ Ադամը, ժամանակին չըմբռնեց կնոջ բարդ էությունը եւ խաբուեց, այդ պատճառով արտաքսուեց Աստուծոյ Դրախտից: Նորագոյն սերնդի տղամարդու համար Երկրային Դրախտն (բարձրագոյն կեանքը) էլ կարող է դժոխքի վերածուել, եթէ արդի դարաշրջանում Ադամի սխալը կրկնի: Պարոնեանը, հայեցակարգային իմաստ ունեցող նման տեսակետներ չաչտնելով, հակադրուել է դարաշրջանում Եւրոպայից թափանցած այն թիւր տեսութեանը, թէ կնոջը պէտք է ազատագրել հանրային աւանդական կապանքներից, որպէսզի նա կարողանայ իր ինքնուրոյն էութիւնը լիակատար դրսեւորել: Պարոնեանը հեզնել է այդ տեսութեան կողմնակիցներին՝ հիմնուելով մարդկութեան դարաւոր փորձի, այդ թւում, հայ մշակութի չիմնարար աւանդութիւնների վրայ: Նա պաշտպանել է այն տեսակետը, համաձայն որի՝ պէտք է ոչ թէ տուրք տալ կեղծ ժողովրդավարութեան պահանջներին, այլ առաջնորդուել մարդկութեան առաջադիմութեան արմատական շահերով: «Միշտ կնկան խորհրդով գործող մը ինչի՞ կը նմանուի, հարցրել է գրողը եւ ինքն էլ պատասխանել.- սանձուած էշու մը» (9, 208): Պարոնեանն այդպէս պատասխանելով հեզնել է ոչ թէ կնոջը, ծաղրել է ոչ թէ նրան իսկապէս յարգող տղամարդուն, այլ՝ կեցութեան օրէնքը չըմբռ-

նած, հեշտամուլ, յարմարուողի կեանքով ապրել կողմնորոշողներին: Կնոջ հասարակական կոչումը թելադրում է, նշել է Պարոնեանը, որ նա ձգտի յաղթահարել իր բնախօսութեան թերութիւնները եւ բանականութեան շրջանակից դուրս չգալ, մանաւանդ, սեռական պահանջմունքի հարցերում: Նա յատուկ զգուշացրել է. «Աշխարհակալութիւնը կանանց համար չէ», կինը մէկ անգամ իրաւունք ունի նուաճել՝ իր ամուսնուն (տե՛ս 6, 334): Իսկ Տղամարդուն պարտաւորեցրել է, որպէսզի նա հսկի Կնոջը՝ յանուն նրա իսկ շահի: «Եթէ կնոջ մը չարիք հասցնել կ'ուզես,- ընդգծել է նա,- թող որ ուզածն ընէ» (7,333): Լուսաւորիչները գտնում էին, թէ մարդկանց «կեանքի հիմնական կանոնն այն է, որ նրանք կատարելագործեն իմացականութիւնը եւ ամբողջովին առաջնորդուեն դրանով»: Նրանք, շրջանցելով սիրոյ զգացումը, մարդու կեանքում առաջնային էին համարում միայն «բարեկամութեան ու բարեացակամութեան» «առաքինութիւնները»: Երբ Սվիֆթի հերոսուհին կարօտով համբուրում է օտարութիւնից վերադարձած ամուսնուն, վերջինս ոչ միայն մերժում է սիրոյ այդ դրսեւորումը, այլեւ դրանից զգուշանք է գոտւմ (կնոջ այդ վարմունքը նրան թւում է անասունին բնորոշ): Պարոնեանը աշխարհիկ սիրոյ խորհուրդի ըմբռնման հարցում հետեւել է հին յոյների, Աստուածաշունչը գրողների եւ վերածննդի դասականների աւանդներին: Քառսից՝ կենսատու աղբիւրից է ծնուել հզօր ուժը՝ ամէն ինչին կենդանութիւն տուող Սէրը՝ էրօսը, բացատրում էին հին յոյները: Սիրոյ շունական ըմբռնումը շարունակելով՝ Աստուածաշունչը գրողները հաւաստում էին. «Եթէ մարդկանց եւ հրեշտակների

լեզուով խօսիմ, բայց սէր չունիմ, ես եղայ ձայն հանող պղինձ կամ հնչեցող ծնծղայ»: «Եւ եթէ մարգարէութիւն ունենամ եւ գիտենամ ամէն խորհուրդները եւ ամէն գիտութիւնը, եւ եթէ ամէն հաւատքն ունենամ, մինչեւ սարերն էլ տեղափոխելու, բայց սէր չունիմ, ոչինչ եմ»: «Սէրը երկայնամիտ է՝ քաղցր է, սէրը չի նախանձում, չի գոռոզանում, չէ հպարտանում»: «Չէլրբանում, իրը չի որոնում, չի գրգռում, չարը չի մտածում»: «Անիրաւութեան վրայ չի ուրախանում, բայց ուրախանում է ճշմարտութեան հետ»: «Ամէն բանի դիմանում է. ամէն բան հաստատում է, ամէն բանի համար յոյս ունի, ամէն բանի համբերում է»: «Սէրը երբէք չի վերջանայ»: Տղամարդու եւ Կնոջ Սէրը արժանի է փառաբանութեան, իր հերթին համոզմունք է յայտնել Պարոնեանը: «Կեանքը ծաղիկ մ'է,- գրել է նա,- իր մեղրն է սէրը» (7, 331): Սէրն ունի վեհացնող նշանակութիւնը, ընդգծել է նա. «Ինչպէս արեւը՝ սէրն ալ կը լուսաւորէ» (7, 353): Գրողը ժպտաւոր է վերաբերել սիրոյ պատճառած տառապանքին. «Չկայ գերի մը, որ սիրոյ գերիին չափ տանջուի» (7, 343), քանի որ այն ցանկալի է բոլոր դէպքերում: Սիրոյ համբոյրը կեանք է պարզեւում, վերածննդի մեծերի նման համոզուած է եղել նա: Ծէքսպիրը՝ Հիւսիսային վերածննդի հանճարը, գիտակցել է սիրոյ ոչ միայն վեհացնող, այլեւ՝ կործանարար ուժը, եւ մարդկանց ուղարկելով հրաւիրելով դրա վրայ (յայտնի ողբերգութեան Ռոմիօյի ու ժուլիետի մահը պայմանաւորուած չէ կենցաղային պարզ թիւրիմացութեամբ, այլ սիրոյ ոչ միայն վեհացնող, այլեւ կործանարար ուժով): Պարոնեանը հրատապ է հատարել էջ 17

AMERICAN RELIABLE WINDOWS



www.americanreliablewindows.com

Beautify while increasing the value of your home with elegant,

18 months no interest* Financing O.A.C.

ENERGY EFFICIENT WINDOW AND DOORS.

Vinyl, Wood, Fiberglass, Clad or Aluminum Replacement, Retro or New Construction

Our Windows Qualify For Tax Credits

Manufacturers rebates & deep discounts available NOW.
Product, Pricing and Financing to meet any Budget.

888-804-7250

Your Satisfaction is Guaranteed.



Licensed • Certified • Insured CSLB LIC#901591

\$89

Rebate* toward the price of new Vinyl Windows

Rebate Example:
5 windows = \$445
10 windows = \$890
15 windows = \$1335



Serving Los Angeles, Ventura, Orange, & San Bernardino Counties

ԳԻՆԻՆ ՈՒ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ

Սպիրտակ գինու շնորհիվ
հեշտ ենք շնչում

Ամերիկացի գիտնականները պարզել են, որ սպիրտակ գինիները բարերար ազդեցություն են թողնում շնչառական համակարգի վրայ, քանի որ այն պարունակում է հակաօքսի դացնոլ յատկություններ, որոնք խանգարում են թոքերում ազատ ռադիկալների քայքայիչ ազդեցությունը:



Առողջութիւն գինու մէջ
Դեռեւս Հիպոկրատն է նկատել, որ խաղողի գինին զարմանալիորէն ներդաշնակ է մարդու բնոյթին: Իսկ հին աշխարհում գինին գերադասում էին, համարելով, որ այն գրեթէ չի զիջում աստուածների հօգուտը:

Հետազոտութեան համար պատահականութեան սկզբունքով հաւաքագրուել է 1555 Նիւ Եորքահայկ կին: Հետազոտութիւն անցկացնելուց եւ ալքոհոլի օգտագործման վերաբերեալ տեղեկութիւններ հաւաքելուց յետոյ եզրակացութիւններ արուեցին, որոնց համաձայն՝ սպիրտակ գինու եւ թոքերի առողջութեան միջեւ կապ կայ: Սակայն, գիտնականների մի մասն էլ չի շնչում է, որ սպիրտային խմիչքների չարաշահումը կարող է հանգեցնել սրտի ու լեարդի հիւանդութիւնների:

Ինչ է գինին
Բազմաթիւ քլինիքական հետազոտութիւնները ցոյց են տուել, որ խաղողի գինին բուժիչ յատկութիւններ ունի, որոնք օգնում են պայքարելու ոչ միայն սովորական մրսածութեան, այլեւ խիստ վտանգաւոր թոքախտ, մալարիա, սրտի, քաղցկեղ հիւանդութիւնների եւ նոյնիսկ ՁԻԱՀ-դէմ: Այո, օրական 1-2 բաժակ չոր կարմիր գինու օգտագործումը՝ հակավիրուսային դեղորայքի համարութեամբ, կ'օգնի երկարաձգելու հիւանդի օրգանիզմում իմունադեֆիցիտի վարակի լատենտ (ոչ ակտիւ) վիճակը 20 եւ աւելի տարի: Ընդ որում, գինու այն բաղադրիչը, որը վարակի զարգացմանը խանգարում է, պոլիֆենոլներն ու ֆլավոնոիդային միացութիւններն են:

Ալքոհոլը կարող է կանխարգիլել շաքարային դիաբետը
ԱՄՆ անդի հետազոտական կենտրոնի մի խումբ բժիշկներ հետազոտել են 63 կնոջ, ովքեր ամէն օր խմել են յատուկ պատրաստուած ալքոհոլային խմիչք՝ նարնջի հիւթի ու սպիրտի խառնուրդ: Արդիւնքում պարզուել է, որ նրանց արեան մէջ ինսուլինի մակարդակը բարձր է հսկող խմբի համեմատութեամբ: Յայտնի է, որ ալքոհոլը շաքարային ճիւղի հիւանդների արեան մէջ նուազեցնում է վրէկոպայի քանակը: Ինսուլինը արեան մէջ վրէկոպայի պարունակութիւնը կարգաւորող հորմոն է: Դրա անբաւարարութիւնը դիաբետ է առաջացնում:

Յայտնի է, որ ստամոքսաղիքային ախտածին շատ մանր էներգիան մէջ (եթէ նոյնիսկ այն ջրով բացած է) աստիճան է: Գինին խթանում է մարսողական գեղձերի աշխատանքը, անբաւարար թթուայնութեան պարագայում նպաստում է աղաթթուի մշակմանը: Օրինակ՝ ոստրեները յաճախ վարակուած են լինում աղիքային ցուպիկով, ուստի դրանք օգտագործելուց առաջ ախտագրեւում են գինով: Հետեւաբար, յատկապէս աղիքային համաճարակների ժամանակ խմելու կասկածելի ջրի մէջ գինու յաւելումը հրաշալի միջոց է վարակներից խուսափելու համար:

Մեծ Բրիտանիայում
հիւանդների թիւը 1,4 մլն է
Ալքոհոլամոլութեան դէմ պայքարող նիւթ Սանկտ Պետերբուրգի մասնագէտները հետաքրքիր հետազոտութիւններ են կատարել: Կաթնասունների, այդ թւում եւ մարդու օրգանիզմում յայտնաբերուել է մի նիւթ՝ մարինոլոֆոնոգենին, որն օրգանիզմում ճնշում է ալքոհոլի հակումը: Նախկինում կարծում էին, որ այդ նիւթը միայն ծովային գոգոշների օրգանիզմում է մշակուում, ուստի այն անուանել են marinos՝ ծովային եւ bufo՝ դողոջ:

Համաչափ կառուցուածք
Սպիրտակ չոր գինիները խորհուրդ է տրուած խմել աթերոսկլերոզի ու գիրութեան դէպքում: Օրական մէկ բաժակ գինով կը նիհարէք աւելի արագ, քան միւս անդակարգերի դէպքում:

Սպիրտային խմիչքները պաշտպանում են թուլամտութիւնից
Այս տեսակէտն են պաշտպանում Նոյանտացի գիտնականները. նրանք կարծում են, որ օրական 1-3 բաժակ գինին կը պաշտպանի Ալզայմերի հիւանդութիւնից: Հետազոտութեանը մասնակցած 55 տարեկանից բարձր 5395 մարդ ուսումնասիրութեան սկզբում ունեցել է թուլամտութեան ակնյայտ նշաններ, իսկ աւարտին տուեալները յուսադրող են եղել:

Ի դէպ, Արժեքներին մայրաքաղաք Պուէնոս Այրէսում մեծ տարածում ունի գինու թերապիան՝ կարմիր գինու արտաքին կիրառումը: Դրանից քսուքներ են պատրաստուած մաշկը թարմացնելու եւ կուրծքը ձգելու նպատակով:

ՅԱԿՈՒ ՊԱՐՈՆԵԱՆԸ

Շարունակուած էջ 16-էն

մարել ուշադրութիւնը սիրոյ ամբողջական ըմբռնման եւ դրսեւորումներին առնչուող հիմնահարցերի վրայ սեւեռելը՝ գիտակցելով, որ դրանք անմիջականորէն կապուած են իր դարաշրջանի մարդու հոգեկան բարձրացման եւ առաջադիմութեան ուղիների որոնման հետ:

Պարոնեանը, աշխարհիկ մարդու «կրօնական» (բարձրաշխարհիկ) եւ «քաղաքական» (եսակենտրոն) զգացմունքները համեմատելով, վերապահումով է մօտեցել վերջինիս, նկատելով, թէ միշտ չէ, որ այն բիւրեղեայ սիրոյ զգացմունք է: Եսակենտրոն զգացմունքների հիմքում սովորաբար ընկած է նիւթական-յուզական բովանդակութիւնը, նկատել է գրողը:

Եսակենտրոն մարդը, «սիրելով», յաճախ ձգտում է «պայմանագրութեամբ» (տե՛ս 5,252) իրենը դարձնել հակառակ սեռի այն անձին, որը նրա վրայ զգացական տպաւորութիւն է գործել, եւ նրանից հաճոյք ստանալ: Նման «սիրոյ» հիմքում (եթէ սիրոյ առարկան շարունակ կարող է փոխուել) ընկած է ոչ թէ հոգեկանի, այլ մարմնականի ձգտումը, համոզմունք է յայտնել գրողը:

Դա, ըստ էութեան, «սէր չէ» (տե՛ս 5,252), քանի որ Սիրոյ ճշմարիտ աղբիւրն անհատի ոչ այնքան սեռական, որքան՝ մարդկային հոգեկան արժանիքի նկատմամբ պահանջմունքն է: Տղամարդը վերջինս գնահատելով է, որ սիրում է կնոջը, կինը՝ տղամարդուն: Սիրելու բուն խորհուրդը կենդանակառութեան յաղթահարումը եւ մարդու վեհացումն է:

Սիրոյ եւ վեհ հաճոյքի գրաւականն այն է, որ անհատները «խորհելու միտք», «գործելու կամք» եւ, յետոյ միայն, «սիրելու սիրտ» ունենան (5,241),- ընդգծել է Պարոնեանը: Ճշմարիտ, բարձրաշխարհիկ սէրը խորսրտում է իրար արժանի գոյգի փոխադարձ խոր զգացմունքի եւ պատասխանատուութեան, այսինքն՝ մարդկային էութեան հոգեկան այնպիսի փոխադարձ արժեւորման ու գնահատման վրայ, որը նրանց միմեանց համար դարձնում է անփոխարինելի:

«Քաղաքացիական ամուսնութեան մէջ,- շարունակել է միտքը Պարոնեանը,- երիտասարդ մը կրնայ ընտրել այնպիսի աղջիկ մը, զոր կը սիրէ, բայց կրօնական ամուսնութեան մէջ այնպիսի աղջիկ մը ընտրելու է, ուսկից որ սիրուած է, որովհետեւ սիրելը հաճոյք մ'է, իսկ սիրուելը՝ երջանկութիւն:

Կրօնական ամուսնութեան մէջ մարդիկ աւելի երջանկութիւն փնտրելու են, քան՝ հաճոյք» (8, 374):

Զպէտք է անգիտանալ, որ Մարդ արարածի՝ կենդանիների «աւազ եղբօր» «խմորի» մէջ ինչ տեսակ զգացմունք ասես չկա՞, որ թիւրիմացաբար «սէր» է յորջորջուում, ընդգծել է գրողը: Ախտաւոր մարդիկ, սիրոյ անուան տակ, յաճախ «անմիտ եւ անխելք եւ տարօրինակ սիրահարների կամ ամուսինների» «նախապաշարմունքներ» (տե՛ս 5,268) եւ անլուրջ, պարսաւելի ցանկութիւններ են ունենում, իսկ մանր բանաստեղծները՝ դրանք գովերգում են:

«Բանաստեղծներից ոմանք»,- հեզնել է Պարոնեանը, հեշտութեամբ մէկ «կնկանից» միւսին են

վազում՝ «ամուսնանալու», այսինքն, «հոգուդ երկրորդ հատոր մը գտնելու» պիղծ ցանկութեամբ: Սիրոյ մասին նման պատկերացում ունեցող բանաստեղծները (եւ մարդիկ) ծաղրի են արժանի, քանի որ «մարմնապիշներ» են: Նրանց հոգին շատ «հատորներ» ունի, իսկ սէրը զարմանալիորէն շուտ է ծնուում եւ վաղ մեռնում, մինչդեռ ճշմարիտ բանաստեղծի կամ սիրահարի սէրը «իւր աւարկայի հող դառնալուն պէս» չի կարող մոխրանալ...

Սիրոյ մասին զարմանալի պարզունակ պատկերացում է ձեւաւորուել, որի համաձայն՝ «պոէտ մը կրնայ քսան կնկան հետ ամուսնանալ եւ ամէնուն վրայ մէջմէկ տաղ գրելով՝ զանոնք սիրած ըլլալ» (10, 373):

«Այս տեսակ բանաստեղծութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ միայն հանգաւոր վայրենութիւն» (10, 373): Զպէտք է անգիտանալ, որ տղամարդու եւ կնոջ սէրը ենթարկուած է սիրոյ համընդհանուր օրէնքին: Մէկին ճշմարիտ սիրող կինը կամ տղամարդը նոյն կերպ նաեւ ուրիշի սիրելի չի կարող, քանի որ. «Սիրտն չնմանի մեր ոտքին կամ ձեռքին, որ կառավարենք զայն մեր ուզած եղանակաւ» (5, 267):

Պարոնեանն աշխարհիկ վեհ սէրը կապել է ամուսնութեան, ընտանեկան յարկ ստեղծելու մարդկային բարձր պահանջմունքի հետ: Գրողն այն համոզմունքն է ունեցել, որ Տղամարդն ու կինը միայն ամուսնանալով, ընտանեկան յարկ ստեղծելով են բարոյական բարձր կեանքով ապրում՝ առողջ զգացմունքներով առաջնորդվելով, իրենցից եսամոլութիւնը վանելով եւ մարդկութեան ու ազգութեան արմատական շահերի տեսակէտից խելացի որոշումներ ընդունելով:

Իհարկէ, գործնականում իտէալական ամուսնութիւնները հազուադէպ են, սակայն ամուսնութեան գաղափարը կեանքի է կոչուել ոչ թէ ինչ-որ մարդկանց քմահաճոյքով, այլ՝ մարդկային ցեղի առաջադիմութեան բարձրագոյն շահի թելադրանքով:

Ուստի. «Որքան ալ կանանց եւ ամուսնութեան վրայ ուզածնիս ըսենք,- ընդգծել է նա,- դարձեալ երկուքեն ալ չենք կրնար գատուել» (7, 327): Անվիճելի է, իհարկէ, որ՝ «սէրն արքայութեան բանալիներն ունի», մինչդեռ «ամուսնութիւնն ալ միշտ դժոխքի դռները կը բանա» (7, 352), սակայն երկրորդը, որպէս կանոն, այն դէպքերում է լինում, երբ զոյգերը ոչ միայն թերի են, այլեւ՝ ամուսնութեան խորհուրդին խելացի չեն վերաբերում:

Ամուսնութիւնը մարդկանց համար սովորաբար վերածուած է «քաւարանի», որտեղ ճշտուած է, թէ նրանք երկրային կեանքում դրախտի, թէ՞ դժոխքի են արժանի, նշել է Պարոնեանը: Տղամարդու եւ կնոջ խնդիրն այն է, որ ռեալ իրականութեան մէջ կարողանան իրենց սէրը եւ ամուսնութիւնը միատեղել՝ վերջինիս գոյութեան իրաւունքը եւ բարձրագոյն օգուտը ըմբռնելով եւ «յարգելով» (տե՛ս 7, 345): Պարոնեանը բարձր կեանքով ապրել ձգտող երիտասարդներին յորդորել է՝ «սիրահարութիւն ընել», բայց ապաւինելով ոչ թէ թեթեւամիտ, այլ՝ լուրջ, խոր, «տիեզերական» զգացմունքների, որոնք հանգեցնում են «իրենց սիրածին հետ» ամուսնութեան:

Ձեր ճանուցումները Վստահեցեք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄՇԱԿՈՅԹՆԵՐ

Շարունակում է 6-էն

Միացեալ Նահանգներ, շարունակելով ներփակելու քաղաքականութիւնը, եւրոպական կարգ մը պետութիւններ իր կողքին կը մխրճէ պատերազմներու մէջ: Շատ աղէկ: Սակայն եւրոպա Միացեալ Նահանգներ չէ: Եթէ ան նոյն չափով ու համոզումով պայքարի իր դաշնակիցին հետ, ինչ կը պատահի եւրո ղրամանիշին: Յուստաս քանի մը ամիս առաջ արժեքը կեց եւրոն տոլարի եւ այլ դրամանիշներու դիմաց ու հասաւ 1,20-ի սահմանները: Արդէն կարգ մը եւրոպական պետութիւններ, որոնք եւրոյի հասարակարգին մաս կը կազմեն, իրենց սխալ ու արտականոն պետական ծախսերով (զանձային քաղաքականութեամբ) ու դրամատուներու սնանկութիւններով տկարացուցին եւրոն եւ պիտի շարունակեն տկարացնել տակաւին: Ինչ պիտի ըլլայ այս դրամա-

նիշին ճակատագիրը, եթէ գործակցին Միացեալ Նահանգներու հետ, ապագային:

Ինչ կը վերաբերի պատերազմի մշակոյթներուն, այսօր պատերազմները չեն մղուի միայն գիտութեամբ գործողութիւններով: Կան տնտեսական համացանցային, դրամանիշներու, առեւտուրի, քարիւղի, դիւանագիտական, գաղտնի սպասարկութիւններու ու ահաբեկչական պատերազմներու մշակոյթներ: Այս անողոք համաշխարհային մթնոլորտին մէջ երկրագունդին վրայ ուր կը մնայ անհատի, մարդկային իրաւունքներու եւ ժողովուրդներու բարօրութեան ճակատագիրը: Չխօսինք բնութեան աղէտներուն մասին:

Իսկ Wikileaks ներփակելու քաղաքականութիւն մըն ալ պէ՞տք է Միացեալ Նահանգներուն համար: Անհամբեր կը սպասենք հակադրութեան:

ՀԱՅ-ՅՈՒՆԱԿԱՆ ՈԱԶՄԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐ

Շարունակում է 8-էն

դարուն Ֆրանսայի Լուդովիկոս 14-րդ թագաւորի գիտութեամբ որ շարունակուեցաւ մինչեւ 20-րդ դար: Այդ ընդհանուր քաղաքական տեսադաշտին մէջ Յունաստան ապրող հայեր մասնակից դարձան Օսմանեան բռնատիրութեան դէմ եղած ապստամբութիւններուն, որուն հետեւանքով 1821 թուին Հելլենական յեղափոխութիւնը որպէս «դաշնակից եղբայր ժողովուրդ» յիշատակած է հայերը, որոնք մնացած են կողք-կողքի յաջորդող դարերուն:

Մեզի աւելի մօտիկ անցեալին հայ յայտնի դէմքեր՝ Համբարձում Պօյաճեան (Մեծն Մուրատ), Զօրավար Անդրանիկ, Զօրավար Թորգոմ եւ Գարեգին Նժդեհ, իրենց արժանի տեղը ունին հատորի վերջաւորութեան: Անոնց քաջագործութիւններու ընդմէջէն 1877 թուին Օսմանեան խորհրդարանի յոյն եւ հայ պատգամաւորները համատեղ բողոք կը բարձրացնէին գաւառի հայոց դէմ գործուած կոտորածներուն համար: Աւելի ուշ, 1890 թուին, համիտեան հայահալած ջարդերու ընթացքին, եւ Ատանայի 1909-ի սոսկալի ջարդերուն յոյն հոգեւոր եւ քաղաքական դէմքեր օժանդակեցին հայերուն՝ ապաստան տալով անոնց:

Գալով Առաջին Պատերազմի տարիներուն, գրքին հեղինակը Գնդ. Ռամազեան «Հայ-յունական Ձինակցութիւնը» գլուխին տակ կը գրէ թէ ինչպէս 1916-22 թուականներուն Պոնտոսի բնակչութեան մէջէն կազմուած էին հայ-յունական միացեալ զինուորական ջոկատներ որպէսզի «հայերուն անունը եւ գինամթերք հասցնէին՝ հայոց ինքնապաշտպանութեան համար»: Փոխադարձաբար Պոնտոսի հայ մարտիկներու պաշտպանութեամբ եւ ծանր կորուստներու գնով մօտ 200 յոյն ընտանիքներ ազատուած էին եւ անցած ուսական գրաւման գօտի: Հեղինակը հաւանական կը գտնէ որ «բազմաթիւ յոյներ» 1918 թ. հայերու

ընդդէմ թուրքերու մղած Սարդարապատի կռիւին մասնակցած են, մեզի համար անծանօթ իրողութիւն մը ինքնին, որ ազատած է Երեւան մայրաքաղաքը թշնամիի ձեռքէն: Յունաստանը եղաւ առաջինը այն պետութիւններէն որ նոյն տարին ճանչցաւ Հայաստանի Հանրապետութիւնը յոյն Ալեքսանդրոս թագաւորի պաշտօնագրով:

1920 թ. Սեւրի Դաշնագրի կնքումէն ետք երկու երկիրներու յարաբերութիւնները աւելի սերտացան Յունաստանի վարչապետ Վենիզելոսի եւ Ալ. Խատիսեանի միջեւ երբ վերջինս պետական այցով Յունաստան կ'երթար եւ հանդիպում կ'ունենար Աթէնքի եւ Իզմիրի հայ համայնքներուն հետ: Թէեւ դիւանագիտական առաքելութիւններ հաստատուեցան երկու երկիրներուն միջեւ եւ սակայն անգործադրելի մնացին նկատի առած 1919-20 թ. թուրք-սովետական ներքին համաձայնութիւնը, սովետներու դէպի Հայաստան յառաջացումը, եւ Հայաստանի Հանրապետութեան վաղաժամ վախճանը:

Ներկայ հրատարակութիւնը ունեցաւ իրեն արժանի պաշտօնական շնորհանդէսը Աթէնքի Հայաստանի Հանրապետութեան Դեսպանատան կազմակերպութեամբ 2010 Դեկտ. 10-ին, Հին Խորհրդարանի դահլիճին մէջ, ի ներկայութեան հեղինակին՝ Գնդ. Սամուէլ Ռամազեանին, յունարէնի թարգմանիչ՝ Երանուհի Ղազարեանին, զինուորական կազմին եւ Յունաստանի Խորհրդարանի անդամներուն: Գնահատանքի յուշանուէրներ յանձնուեցան գիրքի հեղինակներուն եւ հրատարակութեան համար իրենց գործօն մասնակցութիւնը բերող զինուորականներուն: Յատկապէս Փաստինայի եւ նաեւ ամերիկահայ գաղութին համար պատիւ կը բերէ սոյն մեծագիր հատորին թարգմանիչը՝ Երանուհի Ղազարեան որուն աշխատանքը պետական ճանաչում ստացած է իր ծննդավայր Յունաստանի կողմէ:

ԲՈՍՈՐ ԳԻՆԻՆ ԿԱԹԻԼ-ԿԱԹԻԼ

Շարունակում է 13-էն

մեր սիրելի՛ Ռ. Կորիւնի երրորդ գրքի հրատարակչութիւնը, որը իմ տեսակէտով մի կատարեալ յաղթանակ եղաւ իր համար: Գիրքը թէ՛ ներքին բովանդակութեամբ եւ թէ՛ արտաքին կազմուածքով բացառիկ էր...»:

Յաջորդ սրտի խօսք ասողը Խորէն Արամունին էր, նա ասաց. «Ուրախ եմ Ռուբէնի հետ ծանօթանալու համար, նրա կենսագրութիւնը արդէն ինձ յայտնի է»: Նրա կարծիքով լսարանը շատ լուրջ էր, իբր ոգեւորութիւն առաջացնելու միտումով հիւմորով խօսքեր ասաց. Անդրադառնալով գրքի խորագրին ասաց՝ «Սա այն սիրտն է մեր Ռուբէնի կրծքի տակ, որ վառուած է հայրենիքի համար: Ռուբէնը ահաւոր հայրենասէր է, «չմտածող հայրենասէր», այսինքն չի կարող որեւէ վատ բան ընդունել հայրենիքի մասին...»: Հայրենիքը սիրուած է բանականութեամբ, հայրենիքի սէրն ու կարօտը անժխտելի իրականութիւն է: Խորէնը գրքի լեզուն նմանեցրեց հարազատ մեր իրանահայ պապերի լեզուին, ուրիշ տեսակ էլ չի կարող լինի, մենք մեր արմատներից ենք սնունդ ստանում:

Միութեան քարտուղար բանաստեղծ Գարուշ Յարեանցը իր սիրասուն դասեր ամուսնութեան պատճառով երեկոյից բացակայում էր: Այդ առիթով շնորհաւորում ենք՝ մաղթելով նորապսակ գոյգերին երջանիկ կեանք: Նրա սրտի խօսք՝ «Րաֆֆու աւանդների յաջորդը» (գրչակցի յորդորը), որը տպուել է գրքի մէջ, ընթերցեց Արսինէ Վարդազարեանը տպաւորիչ առողջանութեամբ արժանանալով ծափերի:

Բեմ հրաւիրեց տիկ. Նուարդ Առաքելեանը, իրանագէտ բանասէր, թարգմանիչ, ժամանակին դասախօս եւ հաղորդավար խմբագիր: Նա ներկայացրել էր Փերիոյ Ազգագրական միութեան կողմից ողջոյնի խօսք ասելու: Նա ուրախութիւն յայտնեց, որ քառասուն տարի առաջ Թեհրանում հեղինակի դպրոցական սաներից է եղել՝ «Թեհրանի հայոց ազգային «Թունեան» դպրոցի նախկին սանիս մտքովն անգամ չէր անցնի ներկայ գտնուելու Ռ. Կորիւնի գրքի շնորհանդէսին»: Նա շնորհաւորեց Վարդանանքը: Նա պատմութեան ակնարկ արեց Սասանեանների եւ Սեֆեւեանների վարած հայալիսա քաղաքականութեան մասին: Նա շնորհաւորելով գիրքն ասաց՝ «...Ձեր բոլոր նախկին սաների, ինչպէս նաեւ ուսուցիչ գործընկերների անունից եւ Փերիոյ միութեան անունից, շնոր-

հաւորում ենք գրքի շնորհանդէսը մաղթելով նորանոր գրքերի ծնունդ»: Նա շարունակելով խօսքը. «Ռ. Կորիւնի գիրքը մեզ ներկայանում է որպէս հիւսուած իրական պատմութիւններ: Գիրքը դիւրընթեռնելի է... Լեզուն շաղախուած է գրաբարեան հարուստ արտայայտչամիջոցներով... Հեղինակը հայ քաղաքացուն ասելիք ունի»: Մի այլ հատուածով. «...Գիրքը իւրօրինակ արժէք է ներկայացնում մեր ժամանակների կեանքն ուսումնասիրող նաեւ յաջորդ սերունդների համար...»: Յարգելի դասախօսը գրքից ընթերցում է կատարում հաստատելու հեղինակի մտահոգութիւնները ուժացման գնացող ներկայ սերնդի մասին»:

Բեմ հրաւիրուեց մեր միութեան հանդիպումներին մասնակցող եւ օգտաշատ սիրելի Վահէ Աւետիսեանը, նա անկեղծ սրտի յուզական բառերով շնորհաւորեց հեղինակին եւ գովաբանեց ելոյթ ունեցողներին: Նա հիացմունքով արտայայտուեց գրքի խորագրի եւ շապիկի պատկերի ու նրա հեղինակ մեծն արւեստագէտ Մարտիրոս Սարեանի մասին: Ապա գրքի շապիկի պատկերով պատրաստուած եւ հրաւիրատոմսը խոշորացրած եւ շրջանակած նուիրեց հեղինակին:

Նախքան գինեձօնի արարողութիւնը հեղինակը երկխօսք գրութիւնով բոլոր մասնակիցներից սրտագինա շնորհակալութիւն յայտնեց ասելով. «Այս հոգեպարար երեկոյին, քաղցր ու յուզախառն հոգեվիճակ է ինձ պարուրել ի տես այս պատուական ներկայութիւնը մեծարանքի, մասնաւորաբար՝ տաղանդաւոր գրչի ու բանի հեղինակ անձերի...»:

Հետաքրքիր երեկոյ, ներկաները մասնակցեցին գինեձօնին, բոսոր գինին հայկական կաթիլ-կաթիլ հեղուած էր նորալոյս գրքի էջերին, ողջ գիրքը թաթախեց հայոց երկրի արեւալու խաղողի բերքով, ինչպէս Սբ. Ծնունդի եւ Սբ. Զատիկի թաթախման գիշերը իւրաքանչիւր հայ ընտանիքի սեղանին եկեղեցուց բերուած նշխարքը թաթախուած եւ լուծուած է գինու մէջ, որից մասունք սրբութեան Յիսուսի արիւնն ու մարմինը խորհրդանշող բաժանուած է ընտանիքի անդամների մէջ որպէս ծումի կամ պասի լրման նշան, մեղքերի քաւութեան ու թողութեան Սբ. հաղորդութիւն:

Գինովացած գիրքը յիշատակ պահուեց:

Բացառիկ երեկոյ, մեծարանքի գեղեցիկ հանդիսութիւն:

Գոհ հանդէսից, գոհ հիւրասիրութիւնից ներկաները թողեցին սրահը բարձր տրամադրութեամբ:

ՔԱՉ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 10:00-ից 12:30
Կլէմտէյի 380-րդ կայանից

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ: G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

ՄԱՍԻՍ

ԱՄԵՆԱՎՍՏԱՎԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ԱՐՄԵՆ-ՅԱՅԵՐԻ ՆԱԽՆԻՆԵՐԻ ԶԱԿԱՏՔ

Շարունակում է 15-էն

պէս առաջին շարքերում նստածները: Այն սնել, սատարել էր բարեփոխիչ, առաջադիմական շարժումներ, գաղափարախօսութիւններ: Հայոց նախնիների դիցարանը, հայոց հին աստուածների առասպելները նաեւ ներշնչանքի աղբիւր են հանդիսացել: Հայոց իմաստուն մտաւորականներ, իրենց նախնիների դիցաբանութեան հետքերով ստեղծել են հանճարեղ, հրաշալի երկեր, պոէմներ, որոնք ընթերցելով գնում քու նախնիների մեհաններ... հայնալու:

Դիցաբանութիւնը, աշխարհը իմաստաւորելու մտածելակերպ էր, մարդկային գիտակցութեան զարգացման մի աստիճան, երբ գիտութիւնը դեռեւս չէր կարողացել բացատրել իրեն շրջապատող տիեզերքը, չէր կարողացել բացատրել բնութեան երեւոյթների պատճառը: Սակայն, մարդկային զարգացումը հասել էր հոգեւոր արժէքներ զգալու գիտակցութեան մի աստիճանի, որ կարող էր ըմբռնել բնութեան արթնած՝ գեղեցիկի, բարու, չարի, իրեն շնորհուած բարիքի՝ լոյսի, կրակի, ջուրի, մայրութեան պարզեւի խորհուրդը: Այն միայն երեւակայութեան արդիւնք չէր, այլ նաեւ լինելիութեան գիտակցութիւն:

Մարդու նախնիներ, հայոց նախնիներ ստեղծել են դիւցազունների, աստուածների համակարգ՝ դիցաբանութիւն: «Աստուած» եղել է հայերի հնագոյն աստուածութիւններից մէկը, նոյն ինքը դիւցուհի, հետագայում այլ հանգամանքների բերումով դադարել է յատուկ անուն լինելուց եւ անհետանալու փոխարէն պահպանուել է որպէս հասարակ անուն: Դիցաբանութեան մէջ մի երեւոյթի ընդհանրացումը գաղափարը արտայայտուել է մարդացած մի էակի՝ աստուծոյ, դիւցուհու՝ աստուածուհու, կերպարում: Հայոց Արա աստուած, մեռնող ու յարութիւն առնող բնութեան, զարնան զարթօնքի խորհուրդն ունէր: Աստուածացուել են ժողովուրդի կեանքում կարեւոր դեր խաղացած պատմական անձնաւորութիւններ, ինչպէս հայոց նահապետ Հայկը, երկինք բարձրանալով իր շուրջը հաւաքել աստղեր, կազմել «Հայկ Համաստեղութիւն», որի անունը հնչիւնափոխուելով դարձել Արմինա հայոց աշխարհի «Խալտի» անունով գլխաւոր աստուածը:

Համաշխարհային դիցաբանութեան մէջ կարեւոր տեղ ունի

հայկական իմաստուն դիցաբանութիւնը: Բազում դարեր գոյատեւել է այն, շարունակել նախնիների ոգին, նրանց հանճարի իմաստութեան լոյսը ճառագել հայոց հոգիներում, նրա համամարդկային ըմբռնումները ամուր պահել հայերի գիտակցութեան մէջ: Հարիւր, հարիւր դարեր առաջ Արմինա-Հայաստանում հայոց հին աստուածների պաշտամունքը սպանելու երկար տարիների կռիւ եղաւ, չհանդուրժեցին, հայոց աշխարհի պարթեւաց տոհմից արքան գէնքով կրօնափոխ արեց Հայոց Լեւոնաշխարհը, սպանեց հայու նախնիների հաւատքը: Ինչքան զարմանալի է, որ դրացի հզօր բիւզանդիոնը նոր հաւատքի հետ հանդուրժեց նաեւ իրենց հին հաւատքը, չքանդեց իրենց աստուածների մեհանները, նրանց կողքին կառուցեց նոր հաւատքի փառահեղ տաճարներ: Ո՛վ է կարողացել գէնքով սպանել միտք, իմաստութիւն, պատմութիւն: Արմինա Հայրը, մինչեւ մեր օրեր իր հետ բերել է իր նախնիների պաշտամունքի տօնակատարութիւնների յուշը: Գարնան զարթօնքին, աշնանային արեւադարձներին, գնացէ՛ք իրենց նախնիների միակ կանգուն մեհան, տեսէ՛ք ինչպէս են տօնախմբում իրենց հին աստուածների՝ Վահագնի, Միհրի ծնունդը: Գնացէ՛ք իրենց որդեաց հարսանիքներին, իրենց նոր հաւատքի տօնախմբութիւններ, տեսէ՛ք ինչպէս են կատարում նախնիների պաշտամունքի ծէսերի բազում դրուագներ:

Հայոց նախնիների հաւատքի սակաւ տեղեկութիւններ են յիշատակուել Հայ եւ օտար պատմիչներին երկերում: Հայկական դիցաբանութեան պատկերացումները կան արիական ժողովուրդների «Աստուածաշունչ» Մասունցի Դաւիթ դիւցազներգութեան մէջ: Ծովինարի, Մասունցի Մեծ ու Փոքր Մհերների, Դաւիթի կերպարներում կան տիեզերական երեւոյթներ: Հայոց դիցարանի աստուածները ազգային պաշտամունքների ինքնուրոյն յատկանիշներ ունեն: Նրանց նուիրել են յատուկ տօնախմբութիւններ, քանդակել արձաններ, պատել տաճարներ, որոնցից միայն Գառնիի տաճարն է կանգուն մնացել, Գրիգոր Պարթեւը չէր հրամայել այն քանդակել, կարծելով յունական է: Հայոց նոր հաւատքի բոլոր նշանաւոր տաճարները կառուցել են հեթանոս աստուածների փլած մեհանների վրայ եւ նաեւ էջմիածնի Մայր Տաճարը, դարեր խաբեցին, նրանց տալով ոչ իսկական մեկնա-

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

ԱՐԱՄ ՄԱԹՈՍԵԱՆԻ մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնն ու անդամները իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի անմիջական հարազատներուն եւ համայն պարագաներուն:

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

ԱՐԱՄ ՄԱԹՈՍԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Տիրան եւ Մարգրիտ ձերէճեան եւ զաւակներ իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն համայն Մաթոսեան ընտանիքին եւ հարազատներուն:

Առ այդ փոխան ծաղկեպսակի \$100 տուար կը նուիրեն «Մասիս»ին:

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

ԵՂԻԱ ՊԱՐՈՒՍԱԼԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Յարութ եւ Ազնիւ Բարիրեան եւ զաւակներ իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի հարազատներուն:

Առ այդ փոխան ծաղկեպսակի \$50 տուար կը նուիրեն «Մասիս»ին:

բանութիւններ: Արմէն-Հայու հոգում մնաց նրանց ոգու կրակը: Հայոց հին աստուածներին շնորհեցին տեղանուններ, ամիսների ու օրերի անուններ, Արագած՝ Արայի Գահ, Արայի Լեռ: Եթէ քու ծանապարհին անցնես Արայի Լեռան կողքով կանգնի՛ր մի պահ, անէացած նայի՛ր լեռան, այն կարծես մարտում ընկած Արան է փռուած հայոց հողին...: Հայոց հին աստուածների քանդակներից պահպանուել է միայն Անահիտ դիցուհու պղնձաձոյլ գլխամասը եւ նրա պատկերով հելլենիստական շրջանի մի կրծքանշան, այն էլ պահուած է Անգլո-Բրիտոնների թագաւորական թանգարանում:

Հայոց նախնիների հաւատքի դիցաբանութիւն, այն հայոց աշխարհի կրօնքն էր: Հայոց դիցաբանութեան մէջ առկայ են կրօնքի ընդհանրութեան տարրեր: Հայոց կրօնքի, դիցաբանութեան ընդհանրութիւնը, մարդու մտածողութեան, գիտակցութեան զարգացման որոշակի աստիճանն է, տիեզերքի ու բնութեան արթնած խորհուրդի ըմբռնման կարողականութիւնն է: Հայոց նախնիները իրենց երեւակայութեան թուիչքով մարդացրել էին բնութեան, տիեզերքի երեւոյթները: Աշխարհի նման իմաստաւորմանն է առնչուել նաեւ հայոց աստուածների պաշտամունքը, նրանց նուիրում տօնախմբութիւն-

ները, իրենց երեւակայութեան ճախրանքով նրանց համար քանդակուած արձանները, պատած մեհանները, տաճարները: Գնացէ՛ք հայոց Սուբարտու-Սիտանի-Արմինա Աղձնիք աշխարհի Նեմրութա լեռան զագաթի հայոց հին աստուածների սրբավայր, նայէ՛ք նրանց ընկած մարդացած արձաններին, գրկիւր նրանց, թող նրանց հազար, հազար տարիների խորհուրդը հոսի քու սրտին: Հասարակական գիտակցութեան ձեւեր են՝ դիցաբանութիւնը եւ կրօնքը:

Հայոց հին հաւատքը՝ դիցաբանութիւն-կրօնք, պաշտամունք չի եղել գերբնականի նկատմամբ, այլ բնութեան ու տիեզերական երեւոյթների խորհուրդի մարդացումը: Այն, իրենց կեանքի, ստեղծագործ արարման հետ նոյնացումն էր: Այն, արարչութեան փառաբանումն էր, բարիքի նուիրումը, բացառելով իրենց դիցաբանութեան մէջ «չար»ի գոյութիւնը: Հայկական Լեւոնաշխարհում, հարաւից նոր հաւատք պիտի գար, սակայն ոչ նման պարտադրանքով: Կռուով, բռնի կրօնափոխ արեցին Հայոց Լեւոնաշխարհը: Հազար, հազար տարիների հայոց կրօնքը նաեւ թող հանդուրժէին, չքանդէին հին աստուածների տները, չայրէին հայոց Տիր Աստուծոյ գիրը, թող միշտ արթուն մնար: Հայոց հին աստուածները «Արմէն-Հայ» էին:

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՅՈՂ ԶԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասեւեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել՝
(818) 246-0125

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով Զետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506



NOW OPEN SUNDAYS!



MISSION

WINE & SPIRITS

GLENDALÉ STORE ONLY!

**ԱԶՔԸ ԼՈՅՍ՝
ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ԽՄԻՉՔ
ՍՊԱՌՈՂՆԵՐՈՒՆ**

Mission Liquor խմիչքի հաստատութիւնը որ փակ կը մնար Կիրակի օրերը, յետ այսու եւ միայն իր ԿԼԵՆՏԷՅԼԻ մասնաճիւղը պիտի բանայ ամէն Կիրակի, առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.ե. ժամը 4-ը, սկսեալ՝ Կիրակի Մարտ 6-էն: Կլենտէյլի հասցէն է՝

GLENDALÉ

825 W. Glenoaks Blvd., Glendale, CA 91202
(818) 242-0683 • Mon-Sat. 9AM-8PM • Sunday 10AM - 4PM

PASADENA

1785 E Washington Blvd., Pasadena, CA 91104
(626) 794-7026 • Mon-Sat. 9AM - 8PM

SHERMAN OAKS

13654 Burbank Blvd., Sherman Oaks, CA 91401
(818) 785-6529 • Mon-Sat. 9AM - 8PM